

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՎԵՐԱՍՐԵԼ
ՀԱՒԱՔԱԿԱՆ
ԶԳԱՅՆՈՒԹԻՒՆԸ

Խորհրդարանական արտահերթ ընտրու-
թիւններու արդիւնքները սոր մէկնարկ չապա-
հովեցին երկրի արտաքին եւ ներքին ճգնաժա-
մերու հանգուցալուծման: Հայ քաղաքական
միտքը երկու ուղղութեամբ հիմնական առա-
ջադրանքներ ձեւակերպած էր՝ ներքին համե-
րաշխութեան եւ արտաքին առումով՝ արժա-
նապատիւ խաղաղութեան հաստատման:

Բաժանարար եւ սպառնալից հռետորաբա-
նութեամբ եւ քայլերով յատկանշուած ներհա-
սարակական դաշտը յառաջացուցած եւ պա-
տերազմ պարտուած, տարածքներ զիջած եւ
պարտողական յայտարարութիւն ստորա-
գրած պատասխանատու ուժը վերարտադր-
ւած է:

Եղելոյթը, ըստ էութեան, շատ աւելի խոր
քննարկումի կը կարօտի: Ընդհանրացումը, թե՛
անցեալի վերադարձի մերժումով կը պայմա-
նաւորուի գործող իշխանութեան հանդէպ մե-
ծամասնական ընտրագանգուածի կեդրոնա-
ցումը, կը թուի, որ միակ պատճառը չէ այս ար-
դիւնքներու գրանցման:

Պատերազմի արդիւնքները ընդունելու ժո-
ղովրդային տրամադրութիւններու ալիքի երե-
ւոյթը պէտք է իր բացատրութիւնները գտնէ:
Ի՞նչ հանգամանքներու կուտակումն էր, որ մեր
հաւաքական զգայնութիւնը բթացուց՝ ի դէմս
նոր ցեղապականական արարքներ փորձած
թուրքեւզրպէյճանական ռազմական գործո-
ղութիւններուն:

Աւելի խոր ուսումնասիրութեան կը կարօտի
այն, որ պարտութենէն ետք զանգուածային
տեսք չստացաւ համաժողովրդային ցատումը
եւ ատով իսկ չյաջողեցաւ իրականացնել իշխա-
նափոխութիւնը:

Տակաւին ըմբռնելի չէ սահմանային ոտնձը-
գութիւններուն դիմաց ժողովրդային ծառացու-
մի բացակայութիւնը:

Իրականութիւններու հետ հաշտեցումի ըն-
թացքը, նման արհաւիրքներու մէջ բնականոն
պայմաններով կէտեղը շարունակելը իր հար-
ցականները ունի դէռ:

Զենք կրնար համաշխարհայնացումին, ան-
կէ թխող հետեւանքներուն կամ միայն ոչ կառա-
վարական զանազան կազմակերպութիւններու
տարած աշխատանքներուն արդիւնք սեպել եւ
կարգախօսային պատճառահետեւանքային
տեսութեամբ բացատրել ազգային հաւաքա-
կան զգայնութեան չեզոքացումի երեւոյթը:

88-ի շարժման, 90-ականներու ազատա-
մարտին, ապրիլեան պատերազմին եւ այս բո-
լորին դիմաց 44-օրեայ պատերազմին նկատ-
մամբ համաժողովրդային արծազանգումները,
հակազդեցութիւնները, բայց մանաւանդ ար-
դիւնքները ընդունելու-չընդունելու իրականու-
թիւնները տրամազօրէն հակոտնեցնել:

Միևչէ գահաատական չտանան այս բոլո-
րի պատճառահետեւանքային կապերը, հայ
քաղաքական միտքին համար անորոշ պիտի
մնան վերջին ռազմաքաղաքական իրադար-
ձութիւններէն ետք արձանագրուած արդիւնք-
ները:

Գուցէ համալիր են պատճառները՝ կրթա-
կան, մշակութային, քաղաքական, ընկերաբա-
նական, արժեհամակարգային: Եւ խնդիրը այն-
քան պարզ չէ, ընդունելու համար միայն աշ-
խարհաքաղաքական տարողութեան մէջ գեր-
տերութիւններու համաձայնութիւններով պար-
տադրուած իրողութիւններու դէմ անգօրու-
թեան զգացումը:

Բուն խնդիրը այդ բոլորին հանգիստ ընկա-
լումն է եւ այդ հանգստութիւնը երկարաձգելու
ժողովրդային դրսեւորումը:

Այդ՝ զգալի է հասարակական որոշ խափ
մտածողութիւնը: Խաղաղութիւն, ապաշրջա-
փակում, անվտանգ ծառայութիւն, բաց սահ-
մաններ, ազատ առեւտուր, կենսամակարդակի
բարձրացում եւ ածանցեալ նախատեսումներ:
Այս բոլորը կ'արագացնեն ազգային զգայնու-
թեան թուլացման գործընթացը:

Պետական եւ հասարակական կեանքը պի-
տի շարունակուի անկասկած. այս բոլորին
առընթեր գնահատական պէտք է ստանայ հա-
մալիր դրուածքով՝ ժողովուրդի ազգային դի-
մադրողականութեան եւ զգայնութեան հաւա-
քական հոգեկեդրուածքի ձեւախեղման պատ-
ճառահետեւանքային հոլովոյթը:

Այդ զգայնութեան վերասրումն է միայն, որ
կրնայ կանխարգիլել հետագայ յանձնուղա-
կանութիւնն ու նոր մէկնարկ ապահովել պե-
տականութեան վերականգնման եւ արժանա-
պատիւ խաղաղութեան հաստատման գործըն-
թացին:

ՍՆՆԴԵՂԷՆ ՆԵՐԱԾՈՂՆԵՐՈՒ ՍԵՆՏԻԵԱՆ ԿԵՂՐՈՆԱԿԱՆ
ԴՐԱՄԱՏՈՒԷՆ ԿԸ ՊԱՀԱՆՁԷ ՏՐԱՍԱԴԴՐԵԼ ԽՈՍԱՅՈՒՄԸ ՆՊԱՍՏԸ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՊԱՇՏՏՈՒՆՈՒԹԵԱՆ
ԼԻԿԱՅԻ ԵՌՕՐԵԱՅ ԳՈՐԾԱԴՌՈՒԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Սննդեղէն ներածողնե-
րու սենտիքան երէկ Կեդ-
րոնական դրամատունէն
պահանջեց տրամադրել
խոստացուած նպաստը,
որ կարգ մը ամիսներէ ի
վեր չէ տրամադրուած եւ
հասած է շուրջ 75 միլիոն
տոլարի:

Սենտիքայի նախագահ
Հանի Պոհսալի յայտնեց,
որ ժողովուրդին տրամա-
դրուած տարրական սննդեղէնի նպաս-
տը «մահաքուն»-ի մէջ է, որովհետեւ
Կեդրոնական դրամատունը իր պար-
տաւորութիւնները չի կատարեր:

Պոհսալի զգուշացուց, որ այս գու-
մարի չվճարուելուն պարագային սնըն-
դեղէն ներածողները պիտի տուժեն եւ
հսկայական հարցերու դէմ յանդիման
պիտի գտնուին, իսկ հազարաւոր լի-
բանակցիներ իրենց աշխատանքները
պիտի կորսնցնեն:

Պոհսալի կոչ ուղղեց պատկան մար-
միւններուն ստանձնելու իրենց պա-
տասխանատուութիւնը: «Պետութիւնը
պէտք է իր խոստումը կատարէ», հաս-
տատեց ան:

Մինչ խորհրդարանը կը շարունակէ
քննարկել հատուցման քարտի դրու-
թիւնը ստեղծելու եւ ամենէն աղքատ
ընտանիքներուն ապրուստի ձեւ մը
տրամադրելու կարելիութիւնը, պետա-
կան հաստատութիւններու պաշտօ-
նեութեան լիկայի տնօրէն խորհուրդը
կը շարունակէ երեքշաբթի, 22 յունիս
2021-էն սկսած իր եռօրեայ գործադու-
ը, որ կ'աւարտի այսօր:

Խորհուրդը երկրին իշխանութիւն-



ներէն պահանջեց պետական գան-
ձարկղէն իւրացուած գումարները օրի-
նական եւ սահմանադրական բոլոր
ձեւերով վերադարձնել Լիբանան, լու-
ծել աշխատավարձերու հարցը, ինչ-
պէս նաեւ վերատեսութեան ենթարկել
տրամադրուած փոխարդածախսն ու
բարելաւել ընկերային եւ բժշկական
ծառայութիւնները:

Իր կարգին, Ընկերային ապահո-
վագրութեան ազգային սնտուկի (Տս-
ման) տնօրէն Մոհամետ Զարաքի
յայտնեց, որ սնտուկը 46 միլիարդ Լ. ոս-
կիի առ հաշիւ գումար մը տրամադրած
է հիւանդանոցներուն եւ բժիշկներուն՝
աւելցնելով, որ իրենք ամէն ջանք ի
գործ կը դնեն բժիշկներուն այցեգինը
բարելաւելու:

Միւս կողմէ, ճարտարարուեստի
նախարարի պաշտօնակատար Իմատ
Հուպալլա խիստ կերպով բողոքեց այն
իրականութեան դէմ, որ ոմանք կը
փորձեն կառավարութեան կողմէ ճըշ-
դուած 137 ամերիկեան տոլար արժե-
քով հատուցման քարտը, որ պիտի
տրամադրուէր 750 հազար ընտանիքի,

Շար.ը՝ էջ 8

ՓՈՒԹԻՆ. «ՌՈՒՄԻՈՅ ՎՃՈՐՈՐԸ ՆԵՐՐՐՈՒՄԻՆ ՇՆՈՐՀԻ
ԿԱՆԳՆԵՑՈՒԹԵԱՒ ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱԳՆԱՊԸ»

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փու-
թին ընդգծած է, որ Լեռնային Ղարա-
բաղի տագնապը կանգնեցուած է Ռու-
սիոյ լճճորոշ ներդրումին շնորհիւ:
«ՌԻԱ Լովոսթի»-ի հաղորդումով՝ այս
մասին Ռուսիոյ նախագահը յայտնած
է Միջազգային անվտանգութեան հար-
ցով մոսկովեան խորհրդածողովի ծի-
րին մէջ:

«Ռուս խաղաղապահները յուսալի-
օրէն կ'երաշխաւորեն շրջանին մէջ
անվտանգութիւնն ու խաղաղութիւնը,
շատ բան կ'ընեն մարդասիրական
իրավիճակի բարելաման, տարածքի
կանխազերծման, ընկերային ենթա-
կառոյցներու վերականգնման հա-
մար», նշած է Փութինը:

Ան աւելցուցած է, որ Ռուսիան «չի
մոռնար պատասխանատուութեան
մասին, որ կը կրէ դրացի երկիրներու
անվտանգութեան եւ զարգացման հա-



մար. այդ երկիրները Ռուսիոյ հետ կը
միաւորուին պատմական, մշակութա-
յին, արդկային անքակտելի կապե-
րով»:

«Մտադիր ենք հետազային եւս
նպաստել շրջանային տագնապներու
լարուածութեան մեղմացման, խաղա-
ղութեան եւ կայունութեան ամրա-
պնդման մեր ցամաքամասին մէջ», ա-
ւելցուցած է Ռուսիոյ ղեկավարը:

«ՅԱԶՈՂԱԾ ԵՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ՍՏԱՆԱԼ ՄԻԱՅՆ
ԱՐՏԱՄԻ ՇՐՋԱՆԻ ԶԱՐՏԵՄԸ, ՄԻՄ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՆ
ՄԵՋ ՀԱՐԻՐ ՀԱԶԱՐԱԴՈՐ ԱԿԱՆՆԵՐ ԿԱՆ, ՍԱԿԱՅՆ
ԱՆՈՆԸ ԿԸ ՄԵՐԺԵՆ ՄԵԶԻ ԶԱՐՏԵՄՆԵՐ ՏՐԱՍԱԴԴՐԵԼ»
Կ'ԸՍԷ ԱՆԻԵՒ

Ազրպէյճանի նախագահ Իլիամ
Ալիեւ ՄԱԿ-ի Զաղաքակրթութիւն-
ներու դաշինքի գերագոյն ներկա-
յացուցիչ Միկել Անիել Մորաթինո-
սի հետ հանդիպման ժամանակ
յայտարարած է, որ Արցախի Ադ-
տամ (Ակնա) շրջանին մէջ 97.000
ական տեղադրուած եղած է:

«Յաջողեցանք Հայաստանէն
ստանալ միայն Ադտամի շրջանի
քարտէսը. միւս շրջաններուն մէջ
հարիւր հազարաւոր ականներ
կան, սակայն անոնք կը մերժեն մեզի
քարտէսներ տրամադրել», ազրպէյճա-
նական «Հաքքին» կայքին համաձայն,
ըսած է Ալիեւ՝ աւելցնելով, որ պատե-
րազմի աւարտին ետք ականներու
պայթումի պատճառով 30 ազրպէյ-
ճանցի սպաննուած է, աւելի քան 100
ուրիշներ վիրաւորուած են:



Ալիեւի համաձայն, ներկայիս ակա-
նազերծման եւ վերականգնման աշ-
խատանքներ տեղի կ'ունենան Ազր-
պէյճանի կողմէ բռնագրաւուած տա-
րածքներուն մէջ:

Նշենք, որ Ակնայի ականապատ
քարտէսներուն դիմաց Ազրպէյճան 15
հայ գերիներ ազատ արձակած է:

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱԾԻՆՔԻ ԱՆԴԱՍ
ՓՐՈՖ. ԱՐՄԷՆ ԶԱՐԶԵԱՆ ՄԵԿ
ԱՄԻՍՈՎ ԿԱԼԱՆԱԴՐՈՐՈՒԹԵԱՒ

Երեկ՝ չորեքշաբթի, 23
յունիսին «Իզմիրլեան»
բժշկական կեդրոնի ղե-
կավար, փրոֆեսօր Ար-
մէն Զարչեան մէկ ամի-
սով կալանաւորման դա-
տապարտուեցաւ: Նոյն
օրը երեկոյեան սրտի
կաթուածի պատճառով
ան տեղափոխուեցաւ
հիւանդանոց: Այս տեղե-
կութիւնը հաստատեց
անոր փաստաբանը՝
Էրիկ Ալեքսանեան:

Զարչեանը, որ «Հա-
յաստան» դաշինքի ան-
դամ է, կը մեղադրուի
Հայաստանի քրեական օրէնսգիրքի 154.2-րդ յօդուա-
ծի յատկանիշներով՝ ընտրողներուն կաշառք տալ-
ստանալ, ընտրութիւններու ժամանակ բարեգործու-
թեան արգելքի խախտում կամ ընտրողի ազատ
կամքի իրականացման խոչընդոտում:

Արմեն Զարչեան իրեն առաջադրուած մեղադրան-
քը մերժեց:

Շար.ը՝ էջ 7

ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՑ
ՎԵՐԱՀԱՇՈՒՐԿԻ ԱՐԴԻՆՔՆԵՐԸ



Կեդրոնական ընտրական յանձնախումբը տեղե-
կացուց, որ նախանցեալ օր եւ երէկ (22 եւ 23 յունիս)
թիւ 2, 3, 4, 5, 6, 7, 9, 10, 11, 13, 14, 17, 23, 24, 25, 33,
34 եւ 35 տարածքային ընտրական յանձնախումբե-
րուն մէջ կատարուեցան առանձին տեղամասերու
մէջ քուէարկութեան արդիւնքներու վերահաշուարկի
աշխատանքներ:

Վերահաշուարկի աշխատանքներուն ներկայ գըտ-
նուեցան համապատասխան տեղամասային ընտ-
րական յանձնախումբներու անդամները, ընտրու-
թիւններուն մասնակցած կուսակցութիւններու վըս-
տահուած անձեր, լրատումափոխներու ներկայացու-
ցիչներ եւ դիտորդներ:

Վերահաշուարկուած են ընդհանուր 65 տեղամա-
սերու քուէարկութեան արդիւնքները, որոնց լոյսին
տակ 27 տեղամասերու մէջ թէկնածուներուն տըր-
ւած կողմ ձայներու որեւէ փոփոխութիւն չէ արձա-
նագրուած, որմէ 15-ին մէջ ընդհանրապէս որեւէ տու-
եալի փոփոխութիւն չէ արձանագրուած:

Վերահաշուարկուած միւս տեղամասերուն ար-
դիւնքներուն լոյսին տակ արձանագրուած են ձայնե-
րու հետեւեալ փոփոխութիւնները (- նուազում, + յա-
ւելում).

«Արդար Հայաստան» - 8, «Հայ ազգային

Շար.ը՝ էջ 7

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՈՂՋՈՒՆԵՅ
ԻՐԱՆԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀ ԽՊՐԱԿԻՄ
ՈՒՅԻՄԻԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Կիրակի, 20 յունիս 2021-ին, Իրանի Նորընտիր
Նախագահ Իպրահիմ Ռայիսիի ուղղած իր նամակով՝
Արամ Ա. Վեհափառ հայրապետը ուրախութեամբ ող-
ջունեց անոր ընտրութիւնը իբրեւ նախագահ Իրանի
Իսլամական Հանրապետութեան: Վեհափառ հայրա-
պետը ըսաւ. «Ձեր ընտրութիւնը շօշափելի արտա-
յայտութիւն է Ձեր անձին նկատմամբ Իրանի ժողո-
վուրդին ունեցած վստահութեան ու համարումին»: Վեհափառ հայրապետը յաջողութիւն մաղթեց Նո-
րընտիր Նախագահին՝ յատկապէս ներկայ ժամա-
նակներուն, երբ ամբողջ աշխարհն ու Միջին Արեւել-
քը կը դիմագրաւեն ահաւոր տագնապներ եւ մար-
տահրաւերներ:

Անդրադառնալով Իրանի հայ համայնքին եւ անոր
գործօն մասնակցութեան՝ Իրանի առաւել զարգաց-
ման ու յառաջդիմութեան աշխատանքին մէջ, վեհա-
փառ հայրապետը յոյս յայտնեց, որ մեր եկեղեցւոյ
զաւակները միշտ պիտի մնան Նորընտիր Նախագա-
հին հոգածութեան առարկան:

ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ՊԱՆԱՏԸ ԶԵՐԲԵՑ ԱՅՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ԹԵ ԶԱՐԻՐԻՆ ՊԱՇՏՈՆԱՆԿ ԸՆՏԵԼՈՒ ՓՈՐՁԵՐ ԿԸ ԿԱՏԱՐԵ

Կառավարության կազմության հոլովոյթի ջանքերուն արձանագրած տեղեյային լոյսին տակ, երեկ շրջանառության մեջ դրուեցան լուրեր, թե Ազգային ազատ հոսանք կուսակցության ղեկավար, երեսփոխան Ժըպրան Պասիլի հանդիպում մը ունեցած է Զըգ-պալլայի յարաբերական հարցերու պատասխանատու Ուաֆիք Սաֆայի հետ:

Այս շրջագիծին մեջ նշուեցաւ, որ հանրապետութեան նախագահի գոր. Միշել Աուն կը փորձէ առաջարդել նախաձեռնութիւն մը, որ կը միտի նշանակել վարչապետ Սաաա Զարիրիի պաշտօնը յետս կոչել:

Նախագահական պալատը անմիջապէս հերքեց այն տեղեկութիւնները, թէ Զարիրին պաշտօնանկ ընելու փորձեր կը կատարէ, որովհետեւ քաջ գիտէ, թէ այդ քայլը սահմանադրական չէ:

Միւս կողմէ, Պասիլի եւ Սաֆայի միջեւ կիրակի գիշեր տեղի ունեցած հանդիպումին ընթացքին անհրաժեշտ նկատուեցաւ խաղաղութիւնը վերականգնել, յատկապէս նախագահական պալատին եւ Այն Թիւնի միջեւ:

Կառավարութեան կազմութեան խորհրդակցութիւններու շրջագիծին մեջ պահանջներու եւ նախապայմաններու առաստաղները այնքան բարձր են, որ այդ խորհրդակցութիւնները քանի մը օր առաջ կանգ առած են, իսկ կառավարութեան կազմութեան բարդութիւններու ուղին կրնայ բաւական վտանգաւոր ըլլալ:

ՆԱԽԱԳԱՅ ԱՈՒՆ ԹՐԱՊՈԼԻՏԻ ԴԵՏ ԶԵՆԱԿԵՑ ԿՐԹԱԿԱՆ ԶԱՐՑԵՐ



Հանրապետութեան նախագահի գոր. Միշել Աուն երեկ նախագահական պալատին մեջ ընդունեց Զգոր Լիբանան համախմբումի երեսփոխան Էտկար Թրապուսին, որուն հետ քննարկեց շարք մը կրթական հարցեր, ինչպէս նաեւ Բրիտանիոյ նախկին վարչապետ Կորտըն Պրաունի նախաձեռնութիւնը, որուն շրջագիծին մեջ 2 միլիարդ տոլարի հանգանակութիւն պիտի կատարուի՝ տրամադրուելու համար «Զորուսա»-ի համաճարակի ծանր հետեւանքները կրած երկիրներու կրթական մարզին, եւ այդ երկիրներու շարքին է նաեւ Լիբանան:

Նախագահ Աուն յայտնեց, որ կրթական հարցերու խորհրդարանական մնայուն յանձնախումբին կողմէ կրթական ինքնութեան օրէնքի վաւերացումը առնուած կարեւոր քայլ մըն է՝ բարեկարգումի ճամբուն վրայ:

«Խորհրդարանի լիազումար նիստին կողմէ այդ օրէնքին վաւերացումը վճռորոշ ազդեցութիւն պիտի ունենայ կրթական մարզին մէջ փտածութեան կասեցումին առումով, ինչպէս նաեւ կարելի պիտի ըլլայ կրթական մարզին՝ պետական եւ սեփական ոլորտներուն մէջ, Նիւթական օժանդակութիւն տրամադրել», ըսաւ նախագահ Աուն:

Թրապուսի նախագահ Աունի հետ քննարկեց նաեւ երկրին ընկերային մարզը յուզող հարցերը, ինչպէս նաեւ մարդասիրական եւ բժշկական օժանդակութիւններ տրամադրելու վերաբերող հարցեր, յատկապէս Պէյրութի եւ անոր շրջակայքին մէջ:

Քննարկուեցան նաեւ երկրին քաղաքական իրադրութիւնները:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԱՆՔ

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ՎԵՀՎԱՓԱՀԱՅՐԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՕԾՄԱՆ 26-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ

Կիրակի, 27 յունիս 2021-ին, Անթիլիասի մայրավանքին Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ, յընթացք տուրք եւ անմահ պատարագին, ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԱՆՔ պիտի կատարուի Ս. Եղեռնոյս վեհափառ հայրապետին՝

ՆՍՕՏՏ

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՕԾՄԱՆ 26-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ

Կը հրապարակէ մեր ժողովուրդի գաւակները աղօթակից դառնալու հոգեւորական դասուն՝ խնդրելով Աստուծաւ, որ նորանոր իրագործութիւններով եւ յաջողութիւններով լեցուն երկար գահակալութիւն պարգեւէ մեր սիրելի հայրապետին:

Պատարագէն ետք վեհափառ հայրապետը շնորհատրութիւններ պիտի ընդունի վեհարանի դահլիճին մէջ:

ԴԻՄԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ՎԱՐՉԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԱՍԼՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿ

«ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԻՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԼԻՈՒԿԻՆ ԿԱՏԱՐԱԾ Է՝ ՆԱԽԶԱՆ ԶՐԱԺԱՐԻԼԸ»

Վարչապետ արանի մամլոյ գրասենեակը երեկ հրապարակեց հետեւեալ հաղորդագրութիւնը.

«Ամօթալի է, որ Հափա-նիշներն ու յղացքները փոփոխութեան ենթարկուին, իսկ իրականութիւնները՝ թաքցուին: Եթէ մենք առանց ձայնի կ'աշխատինք եւ ոչ ոքի հետ բանավեճ կ'ունենանք՝ երկրին դիմագրաւած ահռելի տագնապին լոյսին տակ, սակայն ասիկա չի նշանակեր, որ լուռ պիտի մնանք այն ամբաստանութիւններուն դիմաց, որոնք կը կատարուին մեր հասցէին եւ մեզի պատասխանատու կը նկատեն նախորդ կառավարութիւններուն քաղաքական, քննախնդրական, անձնական եւ միլիտական վարուելակերպին համար, որ պատճառած է երկրին փլուզումը:

Այս կառավարութիւնը իր պարտականութիւնները լիովին կատարած է՝ նախքան իրաժարիլը: Կառավարութիւնը մշակած է գիտական իր ծրագիրները, որոնք արգելափակուած են անձնական հաշիւներու եւ շահերու պատճառով, հակառակ անոր որ ելեմը-տական միջազգային կառոյցներ հաստատեցին այդ ծրագիրներուն կարեւորութիւնն ու առարկայականութիւնը, եւ անոնք կրնային Լիբանանը փրկութեան հունի մէջ գետեղել:



Այս կառավարութիւնը ամէն ջանք ի գործ կը դնէ նաեւ կատարելու իր ընթացիկ աշխատանքները, սակայն տրամաբանական չէ, որ իրաժարած կառավարութիւն մը շուրջ 11 ամիս ընթացիկ հարցերը շարունակէ հետապնդել:

Կառավարութիւնը իր իրաժարականէն առաջ եւ վերջ կը շարունակէ «հաւաքել» տարիներ շարունակ որդեգրուած ելեմտական քաղաքականութիւններուն թափփփուկները: Ոչ ոք կրնայ իր այդ պատասխանատուութենէն անմեղ դուրս գալ:

Ելեմտական փլուզման առաջնորդող պատասխանատուները հաշուետուութեան պէտք է ենթարկուին, իսկ լիբանանցիները ձեզի անպարտ պիտի չհռչակեն, որովհետեւ դուք պատասխանատու եք նախ եւ առաջ քարն ու մարդը բանդելու, իսկ ի վերջոյ երկրին տնտեսութիւնն ու քաղաքացիին ապրուստը քանդելու»:

ՖԻՐԱՍ ԱՊԻԱՏԻ ԶԱՄԱԶԱՅՆ

«ԶՈՐՈՆԱ» ԺԱՅՐԻ ԶՆԴԱԿԱՆ ՏԱՐԵՐԱԿԸ՝ «ՏԵԼԹԱ»-Ն ԿՐՆԱՅ ՈՐԵԻ ԱՏԵՆ ԶԱՍՆԻԼ ԼԻԲԱՆԱՆ

Պէյրութի կառավարական հիւանդանոցի ընդհանուր տնօրէն Ֆիրաս Ապիատ շեշտեց, որ «Զորուսա» ժաիրի հնդկական տարբերակը, որ ծանօթ է «Տելթա» անունով, աշխարհով մէկ տարածուելու ընթացքին մէջ է:

«Նկատի ունենալով Պէյրութի միջազգային օդակայանին աշխատանքային աշխուժ ընթացքը, ապա կարելի է ըսել, որ «Զորուսա» ժաիրի «Տելթա» տարբերակը կրնայ որեւէ ատեն հասնիլ Լիբանան: Ասիկա անխուսափելի է», ըսաւ ան՝ աւելցնելով, որ կարելի չէ իմանալ «Տելթա» տարբերակին Լիբանան



հասնիլը, որովհետեւ ժաիրերու շարժումներուն հետեւող ծրագիրներ չկան:

Ապիատ հաստատեց, որ «Զորուսա»-ի համաճարակին առումով Լիբանան ապահով երկիր մը չի նկատուիր,

Շար.ը՝ էջ 8

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐԾ ԼՈՒՐԵՐ

●ԱՌՈՐԶԱՊԱՅՐՈՒԹԵԱՆ նախարարութեան տեղեկութիւններուն համաձայն, Լիբանանի մէջ նախորդ 24 ժամուան ընթացքին արձանագրուած են «Զորուսա» ժաիրով 167 վարակուածներ եւ մահացած 3 ուրիշներ:

●ԼԻԲԱՆԱՆԵԱՆ բանակը Արալի մէջ գտնուող սուրիական գաղթական յան մը ներխուժեց եւ ձերբակալեց ահաբեկչական հարցերով ամբաստանուած յանցագործներ:

●ՎԱՐՉԱԿԱՆ եւ արդարութեան հարցերու խորհրդարանական յանձնախումբը, քննարկելէ ետք «Զեփիթըլ քոնթրոլ»-ի վերաբերող օրէնքը, հաստատեց, որ կառավարութիւնը իր դերակատարութիւնը չի կատարեր՝ աւելցնելով, որ յանձնախումբը պիտի աշխատի մշակելու այնպիսի օրինագիծեր, որոնք կառավարութեան կողմէ պէտք էր ներկայացուած ըլլային:

●ՆԱԽԿԻՆ վարչապետ Նեժիպ Միքաթի երէկ յայտնեց, որ անխմաստ է խորհրդակցութիւններու մասին խօսիլ, եթէ բոլորին կողմէ Թաէֆը գործադրե-

լու իմաստով հրապարակային խոստում չտրուի:

●ՆԱԽԿԻՆ վարչապետ Թամմամ Սալամ երէկ ընդունեց Լիբանանի մէջ Թուրքիոյ դեսպան Ալի Պարըզ Ուլուսոյը, որուն հետ քննարկեց լիբանանեան իրադրութիւնները: Հանդիպումը ուներ ծանօթացման արարողակարգային ընդոյթ:

●ԱՌՈՐԶԱՊԱՅՐՈՒԹԵԱՆ հարցերու խորհրդարանական մնայուն յանձնախումբի նախագահ, երեսփոխան Ասեմ Արաժի յայտնեց, որ երկիրը կ'ապրի առողջապահական դժուար իրավիճակ մը, որ հետզհետէ աւելի պիտի վատթարանայ:

●ԱԶԳԱՅԻՆ երկխօսութիւն կուսակցութեան նախագահ, երեսփոխան Ֆուատ Մախզուլի անդրադարձաւ հատուցումներու քարտի դրութեան՝ հաստատելով, որ Ներկայիս պատահած երեսփոխանական ընտրութիւնները գնելու նպատակով խօսքի վաճառք է:

Շար.ը՝ էջ 8

Վ. ՕՀԱՆԵԱՆ-ԳԵՈՐԳԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԵՑ ԴԱՀՈՒԿԱՐՇԱԻ ՄՐՅԱՆԱԿԱՐԱՇԽՈՒԹԵԱՆ ՁԵՌՆԱՐԿԻՆ



Հովանաւորութեամբ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարի պաշտօնակատար Վարդիլէ Օհանեան-Գեորգեանի, դահուկարշաւի ֆետերասիոնը «Քազիս տիւ Լիպան»-ի մէջ կազմակերպեց 2020-2021 տարուան ախոյեանութիւններու մրցանակաբաշխութեան ձեռնարկը, որուն ընթացքին որդեգրուեցան «Զորուսա» ժաիրի բոլոր նախագահութիւնները:

Այս առիթով դահուկարշաւի ֆետերասիոնի նախագահ Ֆրետի Զէյրուզ շնորհակալութիւն յայտնեց Վ. Օհանեան-Գեորգեանին եւ նախարարութեան անձնակազմին, որոնք ջանքերով կարելի եղաւ լիբանանեան ֆետերասիոնի դիրքը միջազգային մակարդակի վրայ պահել, ինչպէս նաեւ քուէարկելու իրաւունքը չկորսնցնել՝ նկատի ունենալով մեր բոլոր պարտաւորութիւնները յարգելու եւ կատարելու հանգամանքը:

Իր կարգին, Վ. Օհանեան-Գեորգեան յայտնեց, որ ինք դահուկարշաւի ֆետերասիոնին աշխատանքային բոլոր մանրամասնութիւններուն ծանօթ է՝ հակառակ երկրին դիմագրաւած քաղաքական, տնտեսական եւ առողջապահական ծանր պայմաններուն, ինչպէս նաեւ կացութիւնը աւելի ես վատթարացնող «Զորուսա»-ի համաճարակին:

Ան նշեց, որ ինք պատասխանատուներուն հետ հետապնդումներէ ետք դահուկարշաւի յատուկ կեդրոնները բանալու արտօնութիւն կրցած է ապահովել մարզական ու զբօսաշրջական մղումներով եւ ֆետերասիոնին հետ համագործաբար:

«Դահուկարշաւի եղանակը յաջողութեամբ աւարտեցաւ. այս առիթով կը շնորհաւորեմ ձեզ, ինչպէս նաեւ կը շնորհաւորեմ լիբանանցի ախոյեանները՝ տեղական եւ արտաքին իմաստով անոնց արձանագրած փայլուն նուաճումներուն համար, հակառակ Լիբանանի տագնապային առօրեային: Մեծագոյն մրցանակը կ'երթայ ախոյեաններուն եւ անոնց զօրակցող ծնողներուն: Կը շնորհաւորեմ դահուկարշաւի ֆետերասիոնը, անոր աշխուժ ընթացքն ու արձանագրած յաջողութիւնները, ինչպէս նաեւ կը մաղթեմ, որ յառաջիկայ եղանակը շատ աւելի լաւ ու ձեռնտու պայմաններ կը ստեղծէ դահուկարշաւի մարզածելու եւ վիրաւոր Լիբանանին համար», ըսաւ ան:

Հանդիսութեան աւարտին նախարարի պաշտօնակատար Վ. Օհանեան-Գեորգեան ստացաւ

Շար.ը՝ էջ 8

«ԱԶԴԱԿ»-Ի ՖՈՆՏԻՆ

- Սերժ Վահէ Խաչատուրեանի մահուան առիթով՝
- Տէր եւ տիկին տոքթ. Ֆիլիպ եւ Սիլվա Զարակիտեան (Ֆրանսա) 100\$

ՄԱԳԹԱՆՔ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՕԾՄԱՆ 26-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ

Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Եղեռնի գահակալ՝ ՆՍՕՏՏ Արամ Ա. վեհափառ հայրապետի ընտրութեան եւ օծման 26-րդ բարեբաւարի տարեդարձին առիթով, կիրակի, 27 յունիս 2021-ին, յընթացք տուրք պատարագի, Լիբանանի հայոց թմի բոլոր եկեղեցիներուն մէջ պիտի կատարուի Հայրապետական մաղթանք:

Սիրով կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը:

ԴԻՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԱՐԱՆԻ

ԱՍԻԿԱՄԵՐ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԶԵ



Եւ անշուշտ պարզ է, թէ վերջին այս ընտրութիւններով ինքզինքին ի՞նչ գնահատական տուած է Զայաստանի հասարակութիւնը... Ինքզինք դատապարտած է ինչպիսի՜ ապաշտրի կարգավիճակի։

1890-ին հասարակութեան այս իսկ կարգավիճակը ջարդուփշուր ընելու առաքելութեամբ էր, որ հրապարակ իջաւ Զայ յեղափոխական դաշնակցութիւնը։ Մարտահրաւերը նոյնն էր 130 տարի առաջ։

Այսօր ընդվզած ենք բոլորս՝ ի տես այն անորակելի քաղաքական խեղճութեան, որուն մատնուած կը թուի ըլլալ հայրենի մեր հասարակութեան հսկայ մէկ զանգուածը։ Խեղճութիւնը, որուն կ'ակնարկեմ, անկարողութիւնն է ոտքի կանգնելու եւ քաղաքացիական ողբայար ցուցաբերելու հաւաքական կեանքի վճռական ռոպպետրուն։ Անատակութիւնը՝ ինքն իր ճակատագիրը տնօրինելու։ Քաղաքական կամքի ահաւոր բացը, որ ազգերու մահավճռն իսկ է։

Իմ լուսահոգի ընկերոջ՝ Չօրայր Խալափեանի «Ոսկէ միջինը» վիպակին մէջ դաժան իրապաշտութեամբ տրուած է հոգեբանական անելը այն մարդուն, որուն յանկարծ առիթ կ'ընծայուի փախուստ տալու Սիպերիոյ կեդրոնացման ճամբարներէն, եւ որ ազատութեան մէջ յայտնուելէ ետք իսկ ի վերջոյ կ'որոշէ ինքն իր կամքով վերադառնալ եւ վերստին յանձնուիլ ճամբարային բռնատիրութեան՝ նախընտրելով կալանքն ու պատիժը՝ ազատութեան մղձաւանջային հարցերը դիմագրաւելու փոխարէն։

Յստակ է, որ մեր երկրի հասարակութեան մէկ մեծ շերտը որոշումէ կը խուսափի որոշում տալու քողին տակ... Ֆրանսացիք այս հոգեվիճակը կը կոչեն *adhesion de desespoir*։ Մարդոց այս կամագուրկ հոգեվիճակին ապաւինելով է, որ կրցաւ ինքզինք մշտնջենաւորել Խորհրդային Միութիւնը մէկ ամբողջ դար։ Մենք ընդունած էինք ապրիլ կեղծ ազատութեան մէջ եւ, այնուամենայնիւ, ապրիլ ստեղծագործ կեանքով, մինչեւ որ հասնէին ազատութեան օրերը։

Ազատութեան օրերը հասան։ Գերութեան հասարակակարգը թաղեց ինքզինք երեսուն տարի առաջ, եւ սակայն, ահաւասիկ, երեսուն տարի ետք մեր հասարակութեան մէկ մեծ շերտը կը մերժէ ինքն իր ինքնութեան տեր կանգնիլ։ Կը մերժէ կերտել իր քաղաքական մտածողութիւնը ազատութեան՝ **նորմալ**։

Զայաստանի հասարակութեան այս շերտը համոզուած կը թուի ըլլալ, որ Փաշինեան այսօր նախընտրուած է տարածաշրջանին տիրութիւն ընելու քաղաքականութեամբ գործող արտաքին ուժերուն կողմէ։ Աւելի վա՛տը։ Ան համոզուած կը թուի, որ պարտութեան կարգավիճակն է իր ապահովութեան հոգեբանական գօտին եւ ոչ՝ ազատութեան կարգավիճակը... Եւ համոզուած է, որ Փաշինեան, իր կերպարով, աւելի ատակ է պարտութեան այդ կարգավիճակը կառավարելու... Չճեմ ուզեր այս կերպարը իր իսկական անունով ընորոշել, բայց յստակ է, թէ ի՞նչ կերպար է անիկա, եւ թէ քաղաքական կեանքի ինչպիսի՜ նուաստացման մէջ կ'ուզէ մեզ պահել արտաքին ուժերու մեծապետական համակարգը։ Փաշինեանով կը շարունակուի պարտութեան վարչակարգը Զայաստանի մէջ, եւ այդ է, որ կ'ուզեն գերտերութիւնները մեր երկրին մէջ, եթէ այդ բանը տրուի իրենց։

Այս խնդրին մէջ Ռուսաստանն ու Արեւմուտքը նոյն դիրքերէն կը գործեն, եւ իւրաքանչիւրը՝ իր յատուկ շահերէն խթանուած։ Անոնք չեն ուզեր Զայաստանի գահին վրայ տեսնել հայ ազգի ազատ կամքը։ Անոնք կ'ուզեն կամակարտի հայը, ի փոխարէն՝ ազատակամ հայուն, եւ զայն խլել մէկգլմէկու ձեռքէն...

Եւ անշուշտ պարզ է, թէ վերջին այս ընտրութիւններով ինքզինքին ի՞նչ գնահատական տուած է Զայասարակութիւնը... Ինքզինք դատապարտած է ինչպիսի՜ ապաշտրի կարգավիճակի։

1890-ին հասարակութեան այս իսկ կարգավիճակը ջարդուփշուր ընելու առաքելութեամբ էր, որ հրապարակ իջաւ Զայ յեղափոխական դաշնակցութիւնը։ Մարտահրաւերը նոյնն էր 130 տարի առաջ։ Նոյնն է նաեւ այսօր։ Մեր առաքելութիւնն է ժողովուրդի այս աղաւաղուած տեսակին չնմանիլ։ Մեր առաքելութիւնն է ծառայել մեր ազգին՝ անոր կապւած ըլլալով ամենէն դառն եւ կարծր սիրով եւ ընտրել իր ազատութիւնը՝ իր ներկայ կարգավիճակին փոխարէն։ Ընտրել մանաւանդ իր վարդաւն սերունդներու ազատութիւնը։ Մեր առաքելութիւնն է ընել այնպէս, որ մեր ժողովուրդը անհատ առ անհատ եւ իր ազատ կամքով ընտրէ արժանապատիւ կեանքը եւ բացարձակապէս մերժէ այս պարտադիր ստրկահաճութիւնը։ Եւ կարելո՞ր է, թէ որո՞ւ կտի դիմագծով կը ներկայանայ ան։ Ան վերջ պիտի զըտնէ։

Ներկայիս իսկական պատերազմը այս ճակատին վրայ է, որ տեղի կ'ունենայ, եւ մեր գործը նոր է, որ կը սկսի։ Մենք չենք վերջացած։ Մենք չենք վերջանար։ Կը կրկնեմ։ Մեր պայմանագրութիւնը մեր ազգին հետ է, եւ մեր յանձնառուութիւնը ժամանցումի չ'ենթարկուի։ Մենք պատուիսն ենք թշնամիին՝ առանց որեւէ սահմանափակիչ եզրերու (*with no statute of limitation*), եւ, կասկած մի՛ ունենաք, մեր յաղթանակը անպայման պիտի գայ։

ԿԱՐՈ ՍՐՄԵՆԵԱՆ



ՍԵԴԱ ՊԱՐՏՈՒՄԵԱՆ-ՏԱՏՈՅԵԱՆԻ «ԻՍԼԱՄԸ ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԻՆ ՄԷՋ. ԲՆԱԳԻՐՆԵՐ, ՀԻՄՆԱՎԱՅՐԵՐ, ՈՒԺԸՆԹԱՅՔ» ՆՈՐ ՀԱՏՈՐԸ (Islam in Armenian Literary Culture. Texts, Contexts, Dynamics)

Փրոֆ. Սեդա Պարսումեան-Տատոյեան հրատարակեց իր վեցերորդ եւ ամենէն լայնածաւալ աշխատութիւնը՝ տասնչորս դարեր տեւող հայ-իսլամական քաղաքական, մշակութային եւ միջկրօնական փոխյարաբերութեանց ուսումնասիրութեանց մէջ։

Զայագիտութիւնը բերելու իր բնական միջավայրին՝ այսինքն արեւելագիտական եւ մասնաւորաբար մերձաւորարեւելեան գիտութեանց ծիրին մէջ, իր առաջին լայն աշխատութիւնն էր «Յովհաննէս Երզնկացիի «Ի տաճկաց իմաստասիրաց գրոց քաղեալ բանք»-ին իսլամական աղբիւրները եւ փիլիսոփայական արձակը այդ լոյսին տակ» (Beirut, 1991)։

Միջնադարեան մերձաւորարեւելեան աշխարհին մէջ հայոց ուղղակի եւ կերդրոնական դերին ամենէն ցայտուն պարագան «Հայկական շրջանը» (1074-1171) կամ դարն էր Ֆաթիմական խալիֆայութեան շրջանին։ Տատոյեանի երկրորդ եւ կրկին ամբողջովին ինքնուրոյն աշխատութիւնը՝ «Ֆաթիմական հայերը - Մշակութային եւ քաղաքական փոխյարաբերութիւններ Մերձաւոր Արեւելքի տէջ» (The Fatimid Armenians: Cultural and Political Interactions in the Near East, Leiden: Brill, 1997) յայտնութիւն մըն էր արեւելագիտութեան եւ միջկրօնական գիտութեանց համար։ Մերձաւոր Արեւելքի մէջ հայոց գործոն դիրքին, դերին եւ գործունեութեան պատմականացումը նորութիւն էր նաեւ հայագիտութեան մէջ։

Բնականօրէն իր յաջորդ գործն էր եռահատոր աշխատութիւն մը՝ «Հայերը միջնադարեան իսլամական աշխարհին մէջ - փոխյարաբերութեանց նախատիպարներ/յարացոյցներ - Եօթներորդէն տասնչորրորդ դարեր» [The Armenians in the Medieval Islamic World Seventh to Fourteenth Centuries: Paradigms of Cultural-Political Interactions. 3 vols. New Brunswick, NJ & UK: Transaction Publishers, 2011, 2013]. հատոր Ա. «Արաբական շրջանը Արմինիայի մէջ-7-11-րդ դարեր. հատոր Բ. «Հայկական **ռեալիտիիք**» իսլամական աշխարհին մէջ եւ տարանջատուող նախատիպարներ եւ Կիլիկիոյ պարագան - 11-14-րդ դարեր»։ հատոր Գ. «Միջնադարեան աշխարհաքաղաքացիութեան նախատիպարներ եւ Երզնկա - Մարգարէն եւ իսլամութիւնը հայ գրականութեան մէջ - 13-14-րդ դարեր»։ Այս ընդարձակ գործը առաջին փորձն էր



հայոց պատմութիւնը բերելու իր լայն շրջանի պատմական շրջանակին մէջ եւ վերբերել հիմնահարցերը, որոնք պէտք է որ առաջնորդեն նոր աշխատութեանց։

Ներկայ աշխատութիւնը՝ «Իսլամը հայ գրական մշակոյթին մէջ - Բնագիրներ, հիմնավայրեր, ուժընթացք» (Islam in Armenian Literary Culture. Texts, Contexts, Dynamics, Louvain: Peeters, 2021) կարելի է նկատել իր *magnum opus*-ը (մեծագոյն գործը), որ իր կարգին պէտք էր որ կատարուէր իրեն բնական եւ տրամաբանական շարունակութիւնը գործընթացի մը, որ սկզբած էր երեք տասնամեակ առաջ Յովհաննէս Երզնկացիի խիստ պարագայովը՝ օգտուելու իր ժամանակի

Շար.ը՝ էջ 6

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԸ ԿԸ ԳՐԵՆ

«ՈՂԲԱՄ ԶՔԵԶ, ՀԱՅՈՒՑ ԱԸԽԱՐՀ»

Յարգելով մեր ընթերցող-աշխատակիցներուն տեսակետ յայտնելու իրաւունքը, տեղ կու տանք այս գրութեան՝ միաժամանակ ընդգծելով, որ հոն տեղ գտած կարգ մը մտածումներ չի բաժնէր խմբագրութիւնը։

Ա.

Որկե՞ս սկսիլ, երբ ամէն բան յստակ ու պայծառ պարզուած է մեր աչքերուն դիմաց։

Երեքհազարամէայ կեանք ունեցող ազգ, որ միայն քանի մը հարիւր տարի վայելած է անկախութիւն, որովհետեւ անհամար թիւով թշնամի զօրքեր արշաւած եւ ոտնակոխ են ըրած մեր պատմական հայրենիքի հողերը՝ թաւաճելով, սրբապղծելով, սպաննելով եւ կարմիր ներկելով մեր հայոց աշխարհը։

Որքան սպանդ, տառապանք, արիւն ու տանջանք, ապա՝ ժամանակաւոր խաղաղութիւն, վերածնունդ եւ գաղթականութիւն։ Կարծես ըլլար անեծքը յունական դիցաբանութեան, ուր Սիզիփոս ստիպուած էր իր ամբողջ կեանքի ընթացքին շատ մեծ ծայռ մը հրելով հասցնել ու ցից լերան գագաթին, ապա ծայրը կրկին պիտի գլորի վար, եւ ան անգամ մը եւս պիտի դատապարտուի ծայրը գագաթ բարձրացնելու, եւ այսպէս՝ շարունակաբար։

Դժուար չէ հասկնալ պատմահայր Մովսէս Խորենացին, որ սգալով՝ ըսած է՝ «Ողբա՛մ զքեզ, հայոց՝ աշխարհ»։

Բայց դեպի ո՞ր, ո՞ր կողմ նայիլ, որո՞ւ յենիլ, որմե՞ օգնութիւն սպասել, երբ շրջապատուած էինք ու տակաւին ե՛նք բարբառու, արիւնարբու, վայրագ ու գազան ժողովուրդներով։ Արեւ-

ՏՈՔԹ. ԿԱՐԴԵՍ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ
Շար.ը՝ էջ 6

ԶԱԽՈՂ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ



Ուրեմն վաթսունմէկ տոկոսը, երբեմն կամայ, բայց մեծ մասամբ՝ ակամայ, չենթարկուելու համար անգործութեան ու բռնութեան, քուէարկեց անոր, որ սեւը-ճերմակը, գրաւորը-բանաւորը, նախկինը-ներկան, «թշնամին դէն շարտեցինք»-ը եւ հայ հերոսներու դիակները դէն շարտողը, «տժգոյնն ու դժբախտը» իրար անցընելով՝ ջլատեց մեր ժողովուրդի յոյսը, հողերը, ինքնավստահութիւնը։ Աղարտեց Անցեայն ու Ներկան։

Մեծն Զայաստանին, հայ ժողովուրդին ճակատագրին նկատմամբ այսքան անփոյթ, անտարբեր վարուողները եթէ նիւթական լայն հնարաւորութիւններու մէջ չեն թաթխուած, վաղը առանց ետեւ նայելու կը լքեն երկիրը, ճիշդ այնպէս՝ ինչպէս զաւակ մը կը լքէ զինք ծնող ու սնող ծնողքը։ Չանգուածաբար կը լքեն նաեւ անոնք, որոնք վերջին յոյսը կարող ու հայածուծ իշխանութիւն մը ունենալու վրայ հիմնուած էր ու ցնդեցաւ երկը։

Իշխանաւորներուն հացին իւր կը քսուի, հիասթափած կամ այլ ելք չունեցող հայերը կ'երթան, տեղը թուրք ու ազերի կը լեցուի։ Դասագիրքերէն կ'անհետին եղեռնագործները, ինչպէս նաեւ՝ մեր պատմութիւնը փառահեղ ճամբու մէջ դնող նախնիները։ Բարեկամութեան նոր սահմանում մը ստեղծուէր է, բարեկամեցողութիւնը դարաւոր թշնամիին հետ է, ոչ թէ՝ սեփական ընտանիքին հետ։ Վայնասուն պոռչտուողը վկայ։ **Չեղունը** վկայ։ Զայուն նորահայ մուրճը, թուրքին դարաւոր եթաղանք՝ հաշտ դրացնութիւն՝ անհաշտ ժողովուրդին գլխուն։

Ի՞նչ ահաւոր, խլրդային բան պատահած է, որ քուէարկողներուն վաթսունմէկ տոկոսը, առաւել՝ քուէարկելու վերապահութիւն ունեցող երեսունինը տոկոսը, չէ՛ մտածած, չի՛ գիտակցիր, թէ ի՞նչ ըսել է հայրենի հող կորսնցնել, հերոսի հուր եւ պատմութեան լոյս կորսնցնել, հազարաւոր ընտանիքներ սուգի մէջ թաթխել, պետութեան դրամը մսխել կեղծուպատիր անձի մը ապահովութեան համար։ Անհատնում ծրագիրներ՝ պետական անշարժ կալուածները խլել, ծախել։ Դողը ծախել, արժանապատուութիւնը ծախել... յետոյ ստիպուած՝ **չեղուն** գնել։ «Զայաստանի հպարտ քաղաքացի» գեղգեղելով՝ հայութեան արժանապատուութիւնը «ասֆալթին վրայ փռել»։ Մինչեւ իսկ արձակազէններ գետեղել պատմական պատուական շէնքերու վրայ։ Ի՞նչ ըրեր է, որ այսքան կը սարսափի իր յորջորջած «հպարտ» քաղաքացիէն։

Երկուընէ ի վեր կայ սգահար հայութիւն մը, որուն կուրծքը կը պատռի տրտմութենէ, եւ կայ խորիստ հայութիւն մը, որ կ'ըմբոստանայ եւ փառք ու պատիւ կը խնկարկէ հայութեան ինքնութեան։ Եռագոյնը միշտ յուշած է մեզի՝ երազը կրնայ կորսուիլ, տեսիլքը անմահ է։

ԿԵՅԱՆՈՅՇ ԹԵՔԵԱՆ

21 յունիս 2021

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԸ ԿԸ ԳՐԵՆ ՀԱՅՐԵՆԱՄԵՐ ԿՏԱԿ

Ես թողեցի փառքի ճամբան եւ ընտրեցի քարոտ ճամբան Զայրենիքիս սիրոյն համար Կու տամ կեանքս՝ թելուզ մահուամբ։

Մի՛ անտեսել իմ եղբայրներ, երբ ձեզ կու տամ վերջին բարեւ. Զայրենիքը մեզ կը կանչէ, Ինչո՞ւ թողնենք ու դուրս ելլենք։

Ինչո՞ւ ըսեն մեզ վախկոտ հայ, Գիտեն ու մեր վրայ խնդան, Մեր քաջերու անունները Գիրքերու մէջ միայն մնան։

Ինչո՞ւ նորից պիտի չծնին, Մեր անմահ սիրուն հարսներ, Արմէն Գարօ կամ Թեփրեան Մնան այդպէս անյիշատակ։

Յիշեցե՛ք ձեր մեծ եղբայրը, Շիրազի թանկ գերեզմանը, Կայ միշտ Մասիս սար կը կանչէր, Օտար ինկած զաւակները։

Բարձրացուցէք ձեր բազուկներ, Իմ քաջարի հայ՝ եղբայրներ, Մի թողէք մեր կոյս քոյրերը, Երթան մտնեն թուրք հարեմը։

Արեւաշատ մեր երկիրը, Բերքերով լի մեր դաշտերը, Օ՛հ մշակենք մեր հողերը, Արօր քաշեն ճահիւնները։

Թող մայրերը թոնիր վառեն, Մեր հարսները օրօր երգեն, Երեխերը կարողան գրեն Զայրենիքը զարգացնեն։

ԴՈՒՓՈՒՄԵ ԿՏՈՅԵԱՆ

ՄԻԱՑՅԵԱԼ ՆԱԶԱՆՈՒՄ

ԻՐԱԶԻ ՀԻՊԱՏՈՍԱՐԱՆԻՆ ՄԵՋ ԳՆԱՀԱՏԱՆԵԻ ԶԵՈՆԱՐԿ՝ Ի ՊԱՏԻ ՀԱՄԱՐՁՈՒՄ ԱՂՊԱՇԵԱՆԻ

Երեքշաբթի, 25 մայիսին, Լոս Անճելեսի մեջ Իրաքի Հանրապետության գլխավոր հիւպատոսարանին մէջ տեղի ունեցաւ գնահատանքի ձեռնարկ մը՝ գլխավորութեամբ եւ ներկայութեամբ Իրաքի գլխավոր հիւպատոս ղոկտ. Սալուան Սինճարիի:

Մարտ 2021-ին իրաքահայ ճարտարագետ Համբարձում Աղպաշեանի հեղինակութեամբ լոյս տեսաւ «Իրաքահայութեան արդի պատմութիւնը» խորագիրով արաբերէն 420 էջնոց շատ հետաքրքրական եւ բովանդակալից հատորը, որ կը բաղկանայ երկու գլխավոր բաժիններէ: Առաջինը լուսարձակի տակ կ'առնէ հին ժամանակներէ ի վեր Իրաք ապրող հայութեան պատմութիւնը, նաեւ՝ Մեծ եղեռնէն ետք Իրաք հաստատուած հայերուն կեանքը: Երկրորդ բաժինը կը ներկայացնէ հայոց բերած նպաստը Իրաքի կեանքին մէջ: Այս հատորը իրաքահայ գաղութի վերջին հարիւր տարիներու արժեքաւոր շտեմարան է:

Այդ հատորին առիթով սրտի խօսք մը գրած Եր հիւպատոս Սինճարի, իսկ օրինութեան գիր մը ղրկուած Եր նաեւ Իրաք ծնած հոգեւորականներէն՝ Հայց. առաքելական եկեղեցւոյ համայն Ֆրանսայի թեմի առաջնորդ եւ Հայց. առաքելական եկեղեցւոյ Գերագոյն խորհուրդի անդամ Վահան արք. Յովհաննէսեանի կողմէ:

Փոխհիւպատոս Աքիտ Սուտանի բարի գալուստի խօսքով ողջունեց ներկաները: Ան շնորհաւորեց մեր հայրենակիցը՝ ճարտարագետ Համբար-



ծում Աղպաշեանը, որ նման հոյակապ հատորով մը ծանօթացուց Իրաքի հայ համայնքը:

Գլխավոր խօսքը վերապահուած Եր գլխավոր հիւպատոս Սինճարիին, որ մասնագիտութեամբ պատմաբան է եւ Իրաքի համալսարաններու մէջ պատմութեան դասախօս եղած է: Ան գնահատանքի խօսքերով արժեւորեց Համբարձում Աղպաշեանի այս հատորը, որ առարկայականօրէն տուած է Իրաքահայութեան ընդհանուր պատմութիւնը, եւ մասնաւոր՝ Հայոց ցեղասպանութենէն ետք Իրաք ապաստան գտած եւ Իրաքի ժողովուրդին հետ սերտօրէն շաղկուած հայութեան կեանքը:

Գլխավոր հիւպատոսը յիշեց, որ Իրաքի ժողովուրդը լայնօրէն եւ սիրով իր սիրտն ու տունը բացաւ գաղթական եւ Ցեղասպանութենէն ազատած հայերուն, եւ ուրախ էր ըսելու, որ հայերը միշտ ալ երախտագիտութեամբ կը յիշեն այդ: Նմանապէս, Սինճարի բարձր գնահատեց Իրաքի ժողովուրդին՝

Շար.ը՝ էջ 6

ԿԻՊՐՈՍ

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՒ ՀԱՅԱԶԳԻ ՅԱՅՏՆԻ ՀԵՌԱՅԱՏԿՈՐԻ ՈՊԵՐԹԷՄՍԻԵԱՆ ԱՅՅԵԼԵՑԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԱՐԱՆ

18 յունիսին, ընկերակցութեամբ պետական ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանի, Ազգային առաջնորդարան այցելեցին Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովի նախագահ Արթուր Թովմասեանը եւ հայազգի յայտնի հեռացատկորդ, Եւրոպայի, ԽՍՀՄ-ի ու Հայաստանի Հանրապետութեան բազմաթիւ անգամներ ախոյեան, 1987-ին Եւրոպայի 8,86 մեթրի մրցանիշ հաստատած, ներկայիս «Արմինիըն Բալետի» ֆետերէշլըն»-ի նախագահ Ռոպերթ Էմմիեանը: Անոնք դիմաւորուեցան թեմի կաթողիկոսական փոխանորդ Խորէն արք. Տողոսմամբեանի կողմէ:

Այցելելէ ետք Նարեկ վարժարան, հիւրերը ուղղուեցան եկեղեցի: Անոնք իրենց շնորհակալութիւններն ու երախտագիտութիւնը յայտնեցին Կիպրոսի գաղութին կողմէ ցուցաբերած նկատառարկայական օժանդակութեանը՝ Հայաստանի ու յատկապէս Արցախի նկատմամբ ու մեծապէս



գնահատեցին կիպրահայ գաղութի բոլոր մակարդակներու վրայ տարած աշխատանքներն ու հայապահպանման առաքելութիւնը: Այցելութեան աւարտին Ա. Թովմասեան սրբազան հոր նուիրեց Վահրամ Բալայեանի «Շուշի» երկնագու գիրքը:

Յայտնենք, որ Հայաստանը ներկայացնող 28 մարզիկներ հայրենիքի գանազան շրջաններէն ժամանեցին Լիմասոլ՝ մասնակցելու համար 19 եւ 20 յունիսին կազմակերպուած միջերուպական խաղերուն:

ԳԵՐՄԱՆԻԱ

ԱՆԺԵԼԱ ՄԵՐԵՆԵԼԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ՊԵՐԼԻՆԻ «ԹՈՒՄՕ» ԿԵԴՐՈՆ

17 յունիսին Գերմանիոյ դիւանապետ Անժելա Մերքել այցելեց Պերլինի «Թումօ» կեդրոնը, ուր TUMO CEO Մարի Լու Փափազեանի հետ շրջեցաւ կեդրոնին մէջ եւ մօտէն ծանօթացաւ անոր աշխատանքներուն, տրամադրած օժանդակութիւններուն, վերջին գարգացումներուն եւ ապագայ ծրագիրներուն:

Այնուհետեւ Գերմանիոյ կրթութեան նախարարը եւ CEO of KfW Development Bank մասնակցեցան կրթական մարզի ապագային մասին արծարծող ասուլիսի մը:

Պերլինի «Թումօ» կեդրոնին բացումը կատարուեցաւ 2020-ին՝ առցանց դրոշմաբար: Կեդրոնը կը գտնուի Պերլինի պատմական Զարդոթնայրկ տարածքին մէջ: Ունի երկու հազար քառ.



մեթր տարածութիւն եւ կարելիութիւն ունի ընդունելու աւելի քան հազար հինգ հարիւր աշակերտ:

Յայտնենք, որ մօտիկ ապագային կ'ակնկալուի դասաւանդութիւնները կատարել ֆիզիքական ներկայութեամբ:

ԹԵՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՏԵՍԶԱԿԱԶՄԵՐՈՒ ԵՒ ՏՆՕՐԵՆՆԵՐՈՒ ԳՆԱՀԱՏԱՆԸ

Նախաձեռնութեամբ Իսլամական խորհրդարանին մէջ Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր Արա Շահվերդեանի, համագործակցութեամբ Թեհրանի հայոց թեմի Կրթական խորհուրդին, 14 յունիսին հայոց ազգային Շանթ-Մարիամեան դպրոցի սրահին մէջ տեղի ունեցաւ հայկական վարժարաններու տեսչակազմի եւ տնօրէնութեան հետ հանդիպում, որուն ընթացքին տնօրէնները պարզեւտարուեցան կրթութեան նախարարութեան տեղակալի անունով տրուած գնահատագիրներով:

Կրթական խորհուրդի նախագահ Ալֆրետ Կարապետեան իր ելոյթին մէջ անդրադարձաւ առցանց դասաւանդման նրբութիւններուն եւ անոր ստեղծած բացթողումներուն՝ յոյս յայտնելով, որ համատեղ ջանքերով եւ համերաւ տարութեամբ կարելի է յաղթահարել ժամանակի թելադրանքն ու հետեւանքները: Վարժարաններու տնօրէնները ներկայացուցին



իրենց ունեցած վարչական եւ ֆինանսական մտահոգութիւնները, եւ առաւել եւս շօշափելի դարձան աշակերտութեան թիւի նուազումն ու դրական միջավայր մը ստեղծելու անհրաժեշտութեան հետ կապւած հարցերը:

ՍԵՊՈՐ ԱՐԸ. ՍԱՐԳԻՍԵԱՆԻ ԶԱՅԱՆԱՅԱԿԱՆ ԶԵՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ 53-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՆՇՈՒՄ

17 յունիսին Ազգային առաջնորդարանի պաշտօնէութիւնը անակնկալ կերպով նշեց Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Սեպուհ արք. Սարգիսեանի քահանայական ձեռնադրութեան 53-րդ տարեդարձն ու անուանակոչութիւնը:

Թեհրանի հայոց թեմի Թեմական խորհուրդի ատենակալեւ Նորայր Արամեան իր խօսքին մէջ անդրադարձաւ սրբազան հօր բեղուն գործունեութեան՝ հաստատելով, որ սրբազանին շնորհիւ՝ համայնքը տարբեր ասպարէզներու մէջ յաջողութիւններ արձանագրած է, եւ մարդեց, որ երկար տարիներ վայելեն սրբազան հօր ներկայութիւնն ու հոգեւոր հովուութիւնը:

Սրբազան հայրը իր հերթին իր գոհունակութիւնը յայտնելով՝ վերջիշեց ինքզինքն եւ իր ուխտակից ըն-



կերները, որոնք 53 տարիներ առաջ սուրբ խորանին առջեւ որպէս կուսակոս քահանայ՝ ուխտեցին ծառայել Աստուծոյ, ազգին եւ հայրենիքին, որուն հաւատարմի մնալով՝ տքնաշանօրէն աշխատեցան արդարացնել գիրենց ձեռնադրող Լիբանանի առաջնորդ՝ Տաճատ սրբազանի, հորէն վեհափառին, նաեւ իրենց ծնողներուն եւ ժողովուրդին կողմէ վայելած վստահութիւնը:

ՆՈՐ ԶՈՐԱ

ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԳԹՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԱՆՂԱՄՈՒՅԻՆԵՐՈՒ ՄԵԾԱՐԱՆԸ

Նոր Զուլայի Հայ կանանց գթութեան միութեան վարչութիւնը իր վաստակաշատ անդամուհիները գնահատելու եւ մեծաբերելու նպատակով պատուոգրեր շնորհեց անոնց, որոնք երկար տարիներ գործունեութիւն ծաւալելով վարչական կազմերուն եւ յանձնախումբներուն մէջ՝ ոչ միայն Նոր Զուլայի Հայ կանանց գթութեան միութեան եւ անոր ենթակայ ծերանոցի վերջին պատճառ հանդիսացած են, այլեւ իրենց ջանադիր աշխատանքով կրտսեր միութեանակցներուն համար դարձած են տիպար:

Առ այդ, վարչութեան անդամուհիները վերջին ամիսներու ընթացքին առանձնաբար այցելելով Ծաղկուշ Փայրաթեանի, Երան Միրզայեանի, Նուարդ Շահ-Նազարեանի եւ Զրիստ Պողոսեանի բնակարանները, անոնց յայտնեցին միութեանակցներու ողջոյնի եւ երախտիքի խօսքերը, նաեւ յանձնեցին վարչութեան կողմէ պատրաստուած պատուոգրերը:



Հարկ է նշել, որ մինչեւ այցելութիւններու կազմակերպումը կեանքն առ յաւել հեռացաւ Հայ կանանց գթութեան միութեան երկար տարիներու վարչական կազմի անդամ Լիլիկ Պողոսեանը, որուն պատուոգիրը յանձնուեցաւ անոր ընտանիքին:

ՄՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ 17-ՐԴ ՆՍՏԱԾՐՁԱՆԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

19 յունիսին Հայ դատի յանձնախումբի կեդրոնատեղիին մէջ տեղի ունեցաւ Սպահանի հայոց թեմի 17-րդ Նստաշրջանի Պատգամաւորական ժողովի ընտրութիւններուն մասնակցող ՀՀ համակիրներու պաշտպանած 12 թեկնածուներուն նախընտրական գրասենակի պաշտօնական բացումը:

Հայ դատի յանձնախումբի ներկայացուցիչ Վահէ Թորոսեան յաջողութիւն մարդեց թեկնածուներուն: Ան շեշտեց, որ յառաջիկայ չորս տարիները բազմաւոր մարտահրաւերներով ողողուած տարիներ պիտի ըլլան թէ՛ հայրենիքի եւ թէ՛ թեմի իմաստով, վստահութիւն յայտնելով, որ թեմի պատգամաւորները միասնական ջանքերով եւ կառուցողական որոշումներով պիտի կարենան դժուարութիւնները փարատել: Ան նաեւ կոչ ուղղեց խումբերում շարքերով մասնակցելու թեմի 17-րդ Նստաշրջանի Պատգամաւորական ժողովի ընտրութիւններուն, որոնք տեղի պիտի ունենան 25 յունիսին:

ՀՀ համակիրներուն պաշտպանած թեկնածուներն են՝ Աշոտ Դաւթեան, Նոէլ Միսնսեան, Արմինէ Սիմոնեան, Սանտրա Խաչատուրեան, Հենրիկ Յակոբեան, Անահիտ Փիլոսեան, Սեդրէթ Յարապետեան, Չարենուշ Աղւորեան, Գեղարդ Մանսուրեան, Սիփան Դազարեան, Նորիկ Պողոսեան եւ Արգիլ Աբուսեան:

Յայտնենք, որ 19 եւ 21 յունիսին, կազմակերպու-



թեամբ Սպահանի հայոց թեմի 17-րդ Նստաշրջանի Պատգամաւորական ժողովի ընտրական յանձնախումբին, ներկայութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ Սիփան եպ. Զեյնեանի եւ ազգային մարմիններու եւ Հայ դատի յանձնախումբի ներկայացուցիչներուն, Նոր Զուլայի Հայ մշակութային «Արարատ» միութեան բացօթեայ տարածքին մէջ Նոր Զուլայի ընտրատարածքի 14 թեկնածուները հանդիպում ունեցան համայնքի անդամներուն հետ: Անոնք հերթաբար ներկայացուցին իրենց կենսագրական գիծերն ու ծրագիրները, նաեւ պատասխանեցին ներկաներու հարցումներուն:

ՊԱՏՐԱՍԵՑ՝ ՄԱՐԱԼ ՄԻՍԵԱՆ

7 ԲԱՆ, ՉՈՐՍ ՕՐԱԿԱՆ ԿԸ ԳՈՐԾԱԾԵՆՔ, ԲԱՅՑ ԿԸ ՄՈՈՆԱՆՔ ՄԱՔՐԵԼՈՒ ԵՒ ՀԱԿԱՆԵԽԵԼՈՒ

1.- ԱԿԱՆՋԱԿԱՆՆԵՐԸ ԵՔԷ ոչ օրական, առնուազն շաբաթը 8 անգամ պետք է հալկանեխել բամպակով ու ալքոլով եւ պարբերաբար խոզանակել փոքրիկ, մաքուր խոզանակով մը:



2.- ՀԱՄԱԿԱՐԳԻՉԻՆ ՄՈՒԿԸ ԵՒ ՍՏԵՂՆԵՐԸ մնա-յուն ձեւով մեր մատներուն հետ կը շփուին, որքան որ ալ լուացուած եւ օճառուած ըլլանք, անխուսափելի է, որ անոնք չաղտոտին եւ մանրէներ չհաւաքեն: Ասոնք եւս յաճախ հալկանեխուելու կարիքը ունին:



3.- ԴՐԱՆ ԲՈՆԱԿՆ ՈՒ ԼՈՅՍԻՆ ԿՈՃԱԿԸ իսկա-կան մանրէներու բոյն են: Ասոնք անձնական իրեր չեն եւ ձեզմէ բացի՝ ուրիշներ ալ կը դպչին անոնց. հե-տեւաբար ձեր եւ ձեր ընտանիքին անդամներուն առողջութեան համար եթէ ոչ օրական, առնուազն շաբաթը երեք անգամ հալկանեխեցէք զանոնք:



4.- ՀԵՌԱԿԱՌԱ-ԿԱՐՄԱՆ ՎԱՅԱՆԱԿԸ ձեռքէ ձեռք անցնող ամենաաղտոտ իրե-րէն մէկն է. յաճախ հալկանեխեցէք զայն խոնաւ լաթով՝ ի հար-կին օգտագործելով ականջ մաքրելու ցալիկները:



5.- ԼՈԳԱՐԱՆԻՆ ՎԱՐԱԳՈՅՐԸ. այն-պէս ինչպէս ակռայի



խոզանակները, հեղուկ օճառին սրուակը եւ ակռայի խոզանակներուն գաւաթը շաբաթական դրութեամբ պէտք է մաքրուին տաք ջուրով եւ օճառով, որքան որ ալ երեւութապէս մաքուր թուին:



6.- ՓՈՔՐԻԿ ԽԱՂԱԼԻՔՆԵՐԸ. պարբերաբար գա-նոնք գետնէցէք ցանց-տոպրակի մը մէջ եւ լուացքի մեքենային մէջ լուացէք ու արեւին տակ չորցուցէք: Կրնաք օգտագործել սովորական լուացքի հեղուկը, բայց նաեւ՝ ճերմակ քացախ կամ **պէքիկի սոսա**: Այս ձեւով դուք կ'ապահովէք ձեր երեխաներուն առող-ջութիւնը եւ կը պաշտպանէք փոշիի հետ կապուած գերզգայնութիւններէ:

7.- ՇՈՒԿԱ-ՅԻ ԿՏԱԷ ՊԱ-Յ ՈՒ Ս Ա Կ Ը . զայն լուացէք մ ե ք ե ն ա յ ի ն մէջ կամ ձեռ-քով եւ արեւին չորցուցէք: Ձեր ընտանի-քին առողջու-թիւնը նաեւ կախեալ է այդ պայուսակին մաքրութենէն:



ԵՆԹԱԳԻՏԱԿՑԱԿԱՆ ՓՈՐՁ Ի՞ՆՉ ՏԵՍԱՔ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԻՆ

Ուշադիր նայեցէք նկա-րին եւ ըսէք, թէ ի՞նչ տեսաք առաջին հերթին: Ձեր պա-տասխանը կը պատմէ ձեր հոգեվիճակին մասին:

- Եթէ առաջին հերթին պէխաւոր, երջանիկ դեմք տեսաք, կը նշանակէ, որ ձեր ներաշխարհը բաւա-կան հանգիստ է, ալեկո-ծումներ եւ տագնապներ չկան: Վայելեցէք այդ վի-ճակը, բայց ուշադի՛ր, երկար ժամա-նակի վրայ այս հոգեվիճակը կրնայ ձեր դէմ դառնալ: Երբեմն յոյգերն ու փոքր տագնապները կը համեմեն կեանքը:

- Եթէ առաջին հերթին թռչուններ տեսաք, կը նշանակէ, որ ներկայիս սերն ու յարաբերութիւնները ձեր կեանքի առաջնահերթութիւններն են: Խօսքը հոս միայն **ռոմանթիք** յարաբե-րութիւններու մասին չէ, այլ՝ ընտանի-



քի, երեխաներու, բարեկամներու հետ ընդհանուր առմամբ:

- Եթէ առաջին հերթին աստղային գիշեր տեսաք, կը նշանակէ, որ պէտք է բացայայտէք ձեր ստեղծագործ ներաշ-խարհը եւ զբաղիք այն ինչով, որ եր-կար ժամանակ պահեր էք ձեր ենթա-գիտակցութեան խորքը՝ ժամանակն է, որ զբաղիք ձեզի հաճոյք պատճառող եւ ձեզ երջանկացնող բաներով: Ո՛րն է ձեր ցանկութիւնը, քայլ առէք անոր ըն-դառաջ:

ԸՆԿՃԱԽՏԸ ՅԱՐԱՅԱՐԵԼՈՒ ԴԻՌԻՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Այսօրուան սիւնակով պիտի չանդ-րադառնանք ընկճախտ պատճառող ազդակներուն մասին, այլ պիտի առա-ջարկենք քանատացի գիտնականնե-րու կողմէ հաստատուած դիւրին եւ գործնական միջոցներ՝ ընկճախտը յաղթահարելու: Մնշուշտ խօսքը կը վե-րաբերի անցողակի, ժամանակաւոր ընկճախտին:

- Ուր ալ ըլլաք, ձգեցէ՛ք ամէն բան եւ առնուազն 10 վայրկեան բացօթեայ քալեցէ՛ք՝ քիթէն շնչելով եւ բերնէն ար-տաշնչելով:

- Ձեզի հաճոյք պատճառող բան մը կերէք (քիչ քանակութեամբ), պտուղ, տուրդ, ընկուզեղէն...

- Ականջակալները դրէք եւ մեղմ երաժշտութիւն ունկնդրեցէք:

- Ծամոն ծամեցէք:

- Պանս մը կերէք:

- Ձեր մտերիմ ընկերուհիին կամ ըն-կերոջ հանդիպեցէք:


- Ազատ ժամերուն հիւսքով զբաղե-ցէք:

- Բոյս մը գնեցէք եւ զայն խնամե-ցէք:

- Անասուն մը որդեգրեցէք:

- Առնուազն ժամ մը հրաժարեցէք ձեր բքիջային հեռախօսէն:

- Եոկայի մէկ-երկու շարժում կա-տարեցէք:



- Յոռետես, դժգոհ եւ հալածախտ տառապող անձերէն հեռու մնացէք:

- Բուրաւետ սերով մարծեցէք ձեր ձեռքերը, ոտքերը, նոյնիսկ՝ ճակատն ու քունքերը:

- Գիրք կարդացէք:

- Ծիծաղաշարժ ժապաւեն դիտեցէք:

- Համեղ կերակուրներ պատրաս-տեցէք եւ ուրախացուցէք ձեր հարա-գատները:

- Գծեցէք, գունաւորեցէք:

- Պարեցէք, երգեցէք:

Նոյնիսկ եթէ այս առաջարկուածնե-րէն ոմանք տարօրինակ թուին, փորձե-ցէք, բան չէք կորսնցնել. միշտ առաջին քայլն է, որ դժուար է:

ՀԵՏԱՔՐԵՐԱԿԱՆ

ԼՈՒԱՅՔ ՓՈԵԼՈՒ «ԾԵՍԸ»

Որքան ալ օտարներուն համար տարօրինակ թուի, հայ կիները չափազանց նախանձախնդիր են լու-ացք փռելու կարգ ու կա-նոնին. զայն ժառանգած են իրենց մայրերէն եւ թծախնդրութեան կը փոխան-ցեն իրենց դուստրերուն՝ յաներժացնելով համաչափ լուացք փռելու առանձնա-յատկութիւնը: Այս «աւան-դոյթը» մինչեւ օրս կանգուն է գրեթէ ամենուրեք, բայց մանաւանդ՝ Ստեփանա-կերտի մէջ: Զաղաքին բակերէն անցնելու ատեն կարելի չէ զգմայիլ պատշգամբ պատշգամ փռուած լուացքներով:

Ոմանք իրենց լուացքը կը փռեն ըստ տեսակի, ոմանք՝ ըստ գոյնի, ոմանք՝ ըստ չափի... բոլոր ձեւերուն մէջ ալ համաչափութեան եւ ներդաշնակութեան գաղա-փարը տիրական է:

Յայտնի չէ, թէ ե՛րբ եւ ինչո՛ւ հայ կիները այսքան կարեւորութիւն տուած են լը-ացք փռելու «ծես»-ին, բայց յստակ է, որ մինչեւ անգամ գիրք հրատարակուած է այս մասին: Ոչ ոք գիտե՛ր՝ ուրկէ սկիզբ առած է լուացքը մեծեն փոքր եւ ըստ գոյ-նեռու փռելու այս հետաքրքրական ասանդոյթը, բայց մէկ բան յստակ է՝ «Ցոյց տուր փռած լուացքդ, ըսեմ՝ ինչպիսի տանտիկին ես դուն...»:

ՍՆՆԱԳԻՏԱԿԱՆ

ՊՏՈՒՂՆԵՐՈՒ ԶԵՐՄՈՒԺԻ ՅՈՒՑԱԿ

Հիթթը, համեղ եւ կենսանիւթերով հարուստ պտուղները թէ՛ սննդարար են եւ թէ՛ զովացնող՝ ամրան այս տաք օրերուն:

Բայց ինչպէս բոլոր ուտելիքները, պտուղներուն սպառումը եւս պէտք է չափաւորել, մանաւանդ եթէ սննդակա-նոնի կը հետեւիք կամ շաքարախտա-ւոր էք:

Ստորեւ կը ներկայացնենք պտուղ-ներու ջերմութի ցուցակը՝ իւրաքանչիւր 100 կրամի համար:

- Խնձոր՝ 52
- Ձմերուկ՝ 30
- Սեխ՝ 32
- Ծիրան՝ 48
- Տանձ՝ 53
- Խաղող՝ 69
- Կեռաս՝ 65
- Կիտրոն՝ 30
- Անանաս՝ 55



- Սալոր՝ 57
- Պանան՝ 9.0
- Դեղձ՝ 54
- Մանկա՝ 65
- Թուզ՝ 75
- Զիւլի՝ 60
- Նուռ՝ 83

Մնշուշտ այս թիւերը կը փոխուին ըստ պտուղի տեսակին եւ նոյնիսկ գոյ-նին:

ՇԱՐԹՈՒՄՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՔ

Լռել եւ արդէն երգերը հզօր
Ու էլ չեն հնչում խօսքերը հպարտ,
Խաւարն է գերել մեր հոգին այսօր
Եւ լռութիւնը յաւետ մահապարտ:

Սեւ գնդերն ահա կազմել են շարքեր
Արիւնուած երկրում, ուր երեկ այնպէս
Շաչում էիք դուք, հրեղէն երգեր,
Եւ ալեկոծում փողոց ու կրկես:

Դաժան ցնծութեամբ թշնամին ահա
Իր սեւ յաղթութեան խնձոյնը է տօնում,
Հռոռում է մեր տանջանքի վրայ,
Արիւնով հարբած՝ արիւն է խմում...

Լցուած է արդէն բաժակը թունոտ,
Համբերելու ժամն անցել է արդէն.
Ելնէ՛նք ճշալու խնդութեամբ քիտոտ
Ու հպարտ կանգնենք մութ բռնութեան դէմ:

Այս դառն օրերի մթնում մահաբեր,
Արնոտ խնձոյքի այս սեւ զնտանում
Դաւաճա՛ն է նա, ով լռում է դեռ,
Մատնի՛չ է, ով իր սուրը չի հանում...

ՎԱՅԱՆ ՏԵՐԵԱՆ

ՆՈՐԱԶԵՒՈՒԹԻՒՆ

«ԿՈՒՉՉԻ» ՆՈՐԱԶԵՒՈՒԹԵԱՆ ՏՈՒՆԸ ՅՆՅԱԾ Ե ՀԱՄԱՅԱՆՅՈԸ

Ի տ ա լ ա կ ա ն «Կուչի» Նորա-ծնութեան տու-նը վերջերս ար-ժանացած է քըն-նադատութիւն-ներու եւ մեղա-դրուած է «հնդկ ժողովուրդը վի-րաւորելու» յան-ցանքով:

Խօսքը կը վե-րաբերի Նորա-ծնութեան տան ա մ ա ռ ն ա յ ի ն հ աւ աք ած ո յ ի ն մէջ ցուցադրուած հնդկական «քուրթա»-ի ոճով զգեստին, որուն արժե-քը 3500 տոլար է:

Զգեստին գինը ընդվզում, գայոյթ է վիրաւո-րանք պատճառած է հազարաւոր մարդոց. կարդանք անոնցմէ ոմանց մեկնաբանութիւնները.

«Ես նոյնը շուկայէն կրնամ գնել 5 տոլարի»:
«Չհամարձակիք վաճառել այն, ինչ կը պատկանի իմ ժողովուրդիս»:

«Ես տասը հատ ունիմ այս զգեստէն»:
«Հնդկաստան այս գումարով դուք կրնաք լաւա-գոյն ինքնաշարժը գնել»:

Մեծ վարկ վայելող իտալական Նորածնութեան տունը ցարդ չէ հալազդած մեկնաբանութիւններուն:

ԽՈՉԱԳԻՐ

ԽԱՇԱԾ ԵԳԻՊՏԱՅՈՐԵՆ՝ ԱԶԱՏԵՐՈՎ



Եգիպտացորենը թէ՛ մեծերու եւ թէ՛ փոքրերու սի-րած ուտելիքն է: Չայն կարելի է մատուցել խաշած կամ խորոված, կարագով եւ այլազան համեմներով թրծուած:

Այսօրուան սիւնակով կը ներկայացնենք եգիպ-տացորենի պարզ բաղադրատոմս մը:

- Բաղադրիչներ՝*
- 4 եգիպտացորեն
 - 4 թէյի դգալ կարագ
 - 1 թէյի դգալ աղի փաթիլներ (ոչ քարաղ) կամ սո-վորական աղ
 - Սեւ փոշի պղպեղ
 - 2 ապուրի դգալ մանրուած ազատքեղ

Պատրաստութիւն

Խոշոր կաթսայի մը մէջ ջուր եռացնել, 2 կամ 3 մասերու բաժնուած եգիպտացորենները խաշել, մինչեւ որ հատիկները փափկանան:

Ներկայանալի ամանի մը մէջ փոխադրել տաք եգիպտացորենները, իւրաքանչիւրին վրայ կտոր մը կարագ դնել, ցանել աղի փաթիլներն ու սեւ համեմը եւ զարդարել մանրուած թարմ ազատքեղով:

Պատրաստեց՝ ՇՈՒՇԻԿ ՄԱՒԻՍԱԳԱԼԵԱՆ

ԱՐԱՔԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼԻ ԲԱԺԱԿԻ ՄՐՑԱՇԱՐՔ

ԼԻԲԱՆԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ ԱՊԱՅՈՒՎԵՑ ԱՐԱՐՏԱԿԱՆ ՀԱՆԳՐՈՒՄՆԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ԻՐ ՏՈՍՍԸ



Երեկ՝ չորեքշաբթի, 23 յունիսին, Լիբանանի ֆուտպոլի ազգային խումբը քիչ մը դժուար, բայց կարելի լողթանակ մը արձանագրեց՝ 1-0 արդիւնքով պարտութեան մատնելով Ճիպուրիին, որ միջազգային դասաւորման մէջ կը գտնուի բաւական վարին դիրքերուն վրայ:

Մրցումին միակ կողմ նշանակեց Զիլալ Յըլուէ, որ սքանչելի փոխանցում մը ստացաւ Սոհապետ Յայտարէն:

Իր արձանագրած այս յաղթանակին շնորհիւ, Լիբանան ապահովեց Արաբական ֆուտպոլի բաժակի մրցաշարքի աւարտական հանգրուանի իր տոմսը:

Աւարտական հանգրուանի մրցումները տեղի պիտի ունենան յառաջիկայ տարեկիզբին, Տոհայի մէջ (Քաթար):

«ԵՐՕ-2020»

ԳԵՐՄԱՆԻԱ ՊԱՐՏՈՒԹԵՆԷ ՍԸ ՓՐԿՈՒԵՑԱՒ ԵՒ ԱՊԱՅՈՒՎԵՑ 1-16-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄՆԻ ԻՐ ՏՈՍՍԸ, ՈՐԻ ԿԸ ՄՐՑԻ ԱՆԳԼԻՈՅ ԴԵՄ



Խմբակներու դրութեամբ տեղի ունեցող «Երօ-2020»-ի ֆուտպոլի մրցաշարքին մրցումները երեկ զիշեր հասան իրենց աւարտին, երբ կատարուեցան յայտագիրին վրայ եղող վերջին չորս ճակատումները:

Ե. խմբակին մէջ, Սպանիա 5-0 արդիւնքով պարտութեան մատնեց Սլովակիան, իսկ Շուէտ 3-2 արդիւնքով յաղթեց Լեհաստանին:

Յաղթական երկու խումբերն ալ ապահովեցին յաջորդ հանգրուանի իրենց տոմսերը:

Ի վերջոյ կատարուեցան 2. խմբակի վերջին երկու մրցումները, երբ Գերմանիա մրցեցաւ Դոնգա- ռիոյ դէմ, իսկ Ֆրանսա՝ Փորթուգալի դէմ:

Վերոնշեալ երկու մրցումներն ալ աւարտեցան 2-2 արդիւնքով հաւասարութեամբ:

Քաղիմ Պենգեմա նշանակեց Ֆրանսայի կոլերը (45+2-րդ՝ փենալթիով եւ 47-րդ), մինչ Փորթուգալի երկու կոլերը նշանակեց Զրիսթիանս Ռոնալտօ (31-րդ՝ փենալթիով եւ 60-րդ՝ փենալթիով):

Գերմանիա պարտութեն մը փրկուեցաւ, երբ 84-րդ վայրկեանին Լէոն Կորթեքցա նշանակեց Գերմանիոյ հաւասարութեան կոլը:

Նշենք, որ 1-16-րդ հանգրուանի մրցումներուն Գերմանիա պիտի մրցի Անգլիոյ դէմ:

Այսօր եւ վաղը հանգիստի օր Ե եւ որեւէ մրցում պիտի չկատարուի:

«ԵՐՕ-2020»

ԱՄԵՆԷՆ ՇԱՏ ՎԱՐՁԱՏՐՈՒՐ ՄԱՐԶԻՉՆԵՐԸ

Միջազգային մարզական մամուլին համաձայն, «Երօ-2020»-ի ֆուտպոլի մրցաշարքին մասնակցող մարզիկներուն մէջ ամենէն շատ վարձատրուող մարզիկներուն առաջին դիրքը կը գրաւէ Գերմանիոյ ֆուտպոլի ազգային խումբին մարզիչը՝ Եոպիմ Լոնյէ (4,6 միլիոն եւրօ):

Երկրորդ դիրքին վրայ է Ֆրանսայի մարզիչ Տիտիէ Տեշան (4,2 միլիոն եւրօ), մինչ լաւագոյն ետեանը կ'ամբողջացնէ Անգլիոյ մարզիչ Կերթը Սաուլսկէյթ (3,5 միլիոն եւրօ):

10-րդ դիրքին վրայ է Պելճիքայի մարզիչ Ռոպերթօ Մարթինսէ (1,2 միլիոն եւրօ):



ԿՈՓԱՄԱՐՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ ԱՊԱՅՈՒՎԵՑԻՆ ԱՐԱՐՏԱԿԱՆԻ ԻՐԵՆՑ ՏՈՍՍԵՐԸ

Իտալիոյ մէջ տեղի ունեցող Եւրոպայի 22 տարեկանէն վար կռիւամարտի ախոյեանութեան Դալաստանի ներկայացուցիչներուն բացառիկ արդիւնքները կը շարունակին:

Հայաստանի կռիւամարտի ֆետերասիոնին մամլոյ քարտուղարութիւնը յայտնեց, որ հայրենի երկու մարզիկներ՝ Արթուր Բազեան (56 քկ) եւ Դամարթում Յակոբեան (81 քկ) իրենց արձանագրած տպաւորիչ արդիւնքներուն շնորհիւ



ապահովեցին աւարտական հանգրուանի իրենց տոմսերը:

Անոնք աւարտականի իրենց ճակատումները պիտի կատարեն այսօր՝ հինգշաբթի, 24 յունիսին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

ԱԼԻԿ ԱՌԱՔԵԼԵԱՆ ՄԻԱՑԱՒ ԱՐԱՐԱՏ-ԵՐԵՒԱՆԻ

Հայաստանի ֆուտպոլի բարձրագոյն դասակարգին մէջ Ելոյթ ունեցող կազմերէն Արարատ-Երեւանի մամլոյ քարտուղարութիւնը յայտնեց, որ ակումբը պայմանագրութիւն մը ստորագրած է 25 տարեկան միջնապահ Ալիկ Առաքելեանի հետ:

Երիտասարդ ֆուտպոլիստը նախապէս բարձրագոյն դասակարգին մէջ հանդէս գալու փորձառութիւն ունի: Ան իր մասնակցութիւնը բերած է 190 մրցումի եւ նշանակած 21 կոլ:

Ան 2012-2015 ժամանակամիջոցին մաս կազմած է Միքայի, իսկ 2015-էն մինչեւ նախորդ տարեշրջանին աւարտը՝ Փիւնիկ Երեւանի:

Նշենք, որ Ալիկ Առաքելեան 16 անգամ կրած է Հայաստանի երիտասար-



դական հաւաքականին շապիկը, իսկ մէկ անգամ ալ՝ ազգային հաւաքականին մարզաշապիկը:

ԱՐՄԷՆ ՄԱՆՈՒԶԱՐԵԱՆ ԴԵՌԱՅԱՒ ԱԶԹՈՊԵՆՆ

Փիւնիկ Երեւանի նախկին խմբապետ Արմէն Մանուչարեան հեռացաւ Աթթուպէն, այս մասին յայտնեց դաշախական ակումբին մամլոյ քարտուղարութիւնը:

Կողմերը երկկողմանի համաձայնութեամբ խզեցին իրարու հետ իրենց ստորագրած պայմանագրութիւնը:

26 տարեկան ֆուտպոլիստը այս տարուան փետրուարին ռուսական Ռոթթըրէն տեղափոխուեցաւ Աթթուպէ, որուն հետ մասնակցեցաւ Դաշախըստանի ֆուտպոլի ախոյեանութեան 11 մրցումի:

Ան նախորդ քանի մը մրցումներէն բացակայեցաւ՝ վիրաւոր ըլլալուն պատճառով:

Նշենք, որ Արմէն Մանուչարեան Հա-



յաստանի ֆուտպոլի ազգային հաւաքականին հետ իր նորամուտը նշեց 2017-ին՝ անոր շապիկը կրելով երկու անգամ:

ՄԻՇԵԼ ՏԵՐ ԶԱՔԱՐԵԱՆ՝ ՊՐԵՍԹԻ ԳԼԽԱՒՈՐ ՄԱՐԶԻՉ

Հայաստանի ֆուտպոլի ազգային հաւաքականի նախկին ֆուտպոլիստ, ֆրանսահայ Միշէլ Տեր Զաքարեան, նշանակուեցաւ ֆրանսական Պրեսթի գլխաւոր մարզիչ, այս գծով յայտնեց ֆրանսական ակումբին մամլոյ քարտուղարութիւնը:

Նշենք, որ 58 տարեկան մասնագետը նախորդ մայիսին հեռացաւ Մոնփելիէն, որուն մարզիչ նշանակուած էր 2017-ին:

Ֆրանսայի ֆուտպոլի աւարտած ախոյեանութեան, Մոնփելիէ 54 կէտով գրաւեց 8-րդ դիրքը, մինչ Պրեսթը հանդիսացաւ 17-րդ:

Ֆուտպոլիստի իր արիեստաժարժ ասպարէզին ընթացքին Միշէլ Տեր Զաքարեան Մոնփելիէին մաս կազմած է 1988-1998 ժամանակամիջոցին, իսկ Հայաստանի ազգային հաւաքականին հետ ան հանդէս եկած է 1996-էն 1997:



Ան մարզիչի իր արիեստաժարժ ասպարէզին սկսած է 1998-ին՝ Մոնփելիէի հետ, անոր հետ աշխատելով 8 տարի, երկրորդ եւ երրորդ խումբերուն հետ:

Ան եղած է Նաե ֆրանսական Նանթի, Էլերմոնի եւ Ռեմի մարզիչ:

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔԻ ԱՆԴԱՄ...

Շարունակուած Ա. Էշէն

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔԸ ԽՍՏՐԵՆ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ՄՐԵՆ ԶԱՐԶԱՆԻ ԿԱՆԱՆԱՌՈՐԻՍԸ

Երեկ աւելի ուշ «Հայաստան» դաշինքը հրապարակեց հետեւեալ հաղորդագրութիւնը.

«Երեւանի ընդհանուր իրաւասութեան դատարանն այսօր բաւարարել է Յատուկ ընկերական ծառայութեան միջնորդութիւնը «Հայաստան» դաշինքի անդամ, «Իզմիրլեան» Բժշկական կեդրոնի տնօրէն Արմէն Զարգեանին կալանաւորելու վերաբերեալ: «Հայաստան» դաշինքը իր ընտրական ցուցակի 20-րդ համար, փրոֆ. Արմէն Զարգեանին

կալանաւորումը գնահատում է որպէս բացայայտ քաղաքական հետապնդում, որը կիրառուած է փաստացի ընտրութիւններին ամիջապէս յետոյ ձեւաւորուած խորհրդարանական ամենամեծ ընդդիմադիր ուժի դէմ: Իրենց այս եւ անցած օրերին գրանցուած այլ քայլերով իշխանութիւնները շատ ուղիղ ցոյց տուեցին, որ նուիրուած են մնում երկիրը ապօրինութիւններով կառավարելու, իսկ իրականում՝ պետութիւնը քայքայելու գործելաոճին: «Հայաստան» դաշինքը խստօրէն դատապարտում է անուանի բժիշկ Արմէն Զարգեանի կալանաւորումը եւ անելու է առաւելագոյնը՝ արդարութիւնը վերականգնելու համար:

ՃԱՏՐԱԿ

ԼԵՒՈՆ ԱՐՈՆԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԻՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ ԱՇԽԱՐՀԻ ԲԱԺԱԿԻ ՄՐՑԱՇԱՐՔԻՆ



Աշխարհի ճատրակի բաժակի մրցաշարքին Հայաստան պիտի ունենայ հինգ մասնակից, այս մասին յայտնեց ճատրակի միջազգային ֆետերասիոնին մամլոյ քարտուղարութիւնը:

Այս մրցաշարքին Հայաստանը պիտի ներկայացունեն Լեւոն Արոնեան, Հայկ Մ. Մարտիրոսեան, Շանթ Սարգսեան, Յովհաննէս Գաբուգեան եւ Գաբրիէլ Սարգսեան:

Նաք առաջի դրութեամբ տեղի ունենալիք այս մըրցաշարքին պիտի մասնակցին 156 ճատրակ խաղացողներ:

Աշխարհի բաժակի այս մրցաշարքը տեղի պիտի ունենայ 10 յուլիսէն 8 օգոստոսին, Սոչիի մէջ (Ռուսիա):

Մրցաշարքին մրցանակային հիմնադրամը կը կազմէ 1,892 միլիոն ամերիկեան տոլար:

Իսկ աղջկանց մրցաշարքին կը մասնակցին 78 ճատրակ խաղացողներ:

Հայաստան պիտի ունենայ միայն մէկ ներկայացուցիչ՝ Էլինա Դանիլեան:

Աղջկանց մրցաշարքին մրցանակային հիմնադրամը կը կազմէ 676 հազար ամերիկեան տոլար:

ԻՏԱԼԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

ՄԵԽԹԱՐԵԱՆԻ ԿՈԼԸ ՃԱՆՉՑՈՒԵՑԱՒ ՆԱԽՈՐԴ ՏԱՐԵՇՐԶԱՆԻ ԱՎՈՒՄԲԻՆ ԼԱՄԳՈՅՆԸ

Ա. Էս. Ռոմայի ֆուտպոլի համակիրներուն ըուեարկութեամբ, Իտալիոյ ֆուտպոլի ախոյեանութեան («Քալչիօ») նախորդ տարեշրջանին հռոմեան ակումբին լաւագոյն կոլի հեղինակը, Հայաստանի ֆուտպոլի ազգային հաւաքականի միջնապահ Զենիիս Միսթարեան է:



Իտալիոյ ֆուտպոլի ախոյեանութեան 2020-2021 տարեշրջանի 8-րդ հանգրուանին Ա. Էս. Ռոմա իր դաշտին վրայ 3-0 արդիւնքով յաղթեց Փարմային:

Այս մրցումին Միսթարեան **տուպլէ** մը իրագործեց: Անոր նշանակած կոլերէն մէկը ճանջցուեցաւ իբրեւ ակումբին տարեշրջանի լաւագոյն կոլը:

ՄԵՍՍԻ ԿՐԿՆԵՑ ՄԱՍՔԵՐԱՆՈՅԻ ՄՐՑԱՆԻՇԸ

Արժանթինի ֆուտպոլի ազգային խումբի յառաջապահ Լիոնէլ Մեսսի նախանցեալ օր կրկնեց Խալիէ Մասքերանոյի հաստատած մրցանիշը, ազգային խումբին հետ կատարած մրցումներուն քանակով:

«Քուփա-Ամերիքա» ֆուտպոլի մրցաշարքին ծիրին մէջ, Պարսելոնայի 33 տարեկան ֆուտպոլիստը Արժանթինի հետ կատարեց իր 147-րդ մրցումը, Փարակուէի դէմ արձանագրուած յաղթանակին ընթացքին (1-0):

Նոյնքան մրցում կատարած Մասքերանօ շնորհաւորեց Մեսսին՝ անոր ձեռք ձգած այս յաջողութեան համար:

ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ...

Շարունակուած Ա. Էշէն

ընկրես»՝ 0, «Քաղաքացիական պայմանագիր»՝ + 659, «Չարթօնք» -2, «Ազատութիւն»՝ 0, «Պատիւ ունեն»՝ + 5, «Միասնական հայրենիք»՝ + 1, ԶԱՊ՝ 0, «Լուսաւոր Հայաստան»՝-1, «Հանրապետութիւն»՝ + 1, «Հայրց հայրենիք»՝ + 2, «Ազատ հայրենիք» դաշինք՝ -10, «Բարգաւաճ Հայաստան»՝ + 5, Հայաստանի դէմոկրատական կուսակցութիւն՝ 0, «5165 ազգային պահպանողական»՝ + 1, «Քաղաքացու որոշում»՝ 0, «Շիրիսեան- Բաքաջանեան» դաշինք՝ + 52, «Ազգային օրակարգ»՝ -1, «Վերելք» -19, «Ազատական»՝ -2, «Հայաստանի եւրոպական»՝ -1, «Հայաստան» դաշինք՝ + 744, «Ազգային-ժողովրդավարական բեւեռ»՝ -60, «Ինքնիշխան Հայաստան»՝ + 52:

24 յունիսին պիտի շարունակուին վերահաշարկման աշխատանքները:

«ԵՌԱԿՈՂՄ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ ԻՐ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՉԵՒԱԴՐՈՒՄԷՆ ԵՏՔ»

Կ'ԸՍԵ ԱՐԴՊԵՅՃԱՆԻ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԸ



Եռակողմ աշխատանքային խումբը իր գործունեությունը պիտի շարունակե Զայաստանի մեջ նոր կառավարության ձևավորումից հետո: Ազդեցության-կան «Միևկալ» կայքը կը հաղորդե, որ այս մասին յայտարարած է Ազդեցության փոխվարչապետ Շահին Մուսաբաջայեը:

«Զայաստանի մեջ տեղի ունեցած են ընտրություններ, կը ձևավորվի նոր կառավարություն: Կը կարծեմ, որ նոր կառավարության ձևավորումից հետո աշխատանքային խումբը պիտի շարունակե իր գործունեությունը: Մինչ այդ ժամանակը, հանդիպումներուն կը նկատուէր բաւական կառուցողական մօտեցում», ըսած է Մուսաբաջայե:

ՆԵՏԵՐԼԱՆՏԵՐՈՒ ԽՈՐՀՐԱՐԱՆԻ ԹՐՔԱԿԱՆ ԽՄԲԱՅՈՒԹԻՒՆԸ ՄԻԱՅԱԾ Է ՀԱՅ ՊԱՏԵՐԱՋՄԱԿԱՆ ԳԵՐԻՆԵՐԸ ԱՆՅԱՊԱՐ ԱՋԱՏ ԱՐՁԱԿԵԼՈՒ ՊԱՀԱՆՁԻՆ



Թուրքիոյ եւ Ազդեցանի շահերու սպասարկումով ծանօթ Նետերլանտներու «Տեք» կուսակցության եռանդամ խմբակցությունը փոխած է իր դիրքորոշումը եւ միացած անցեալ շաբաթ խորհրդարանի որդեգրած բանաձեւին, որ արտաքին գործոց նախարարին կոչ կ'ուղղէր եւրոպական մակարդակով ճնշում գործադրելու Ազդեցանի վրայ՝ հայ պատերազմական գերիները եւ քաղաքայինները անմիջապէս իրենց հայրենիք վերադարձնելու պահանջով: Այս մասին կը հաղորդէ «Արմենիա»-ը:

«Տեք» կուսակցությունը Թուրքիոյ ղեկավարին շահերը յառաջ մղող ուժի համբաւ ունի եւ կ'ընտրուի քանի մը հարիւր հազարնոց թրքական համայնքին ջուկներով:

ԼԻՔԱՆԱՆԵԱՆ...

Շարունակում 2-րդ էջին

●ԸՆԴՀԱՆՈՐ ապահովության ընդհանուր տնօրէն հազարապետ-գործակար Ապաւա Իպրահիմ հանդիպում մը ունեցաւ Լիբանանի մէջ Չուիքիոյ ղեսպան Մոնիթը Ընդ-Քըրկեօզի հետ: Զանդիպումը ունէր հրաժեշտի բնոյթ:

●ՆԵՐՔԻՆ ապահովության ուժերը երէկ Պէյրուքի միջազգային օդակայանին մէջ ձերբակալեցին լիբանանցի մը, որ 119.350 կեղծումած ամերիկեան տոլար կը պատրաստուէր փոխադրելու Թուրքիա:

●ԸՆԿԵՐՎԱՐ յառաջդիմական կուսակցության ղեկավար Ուալիտ Ժամպլաթ յայտնեց, որ «Քորոնա» ժահիրին ղէմ պայքարելու իմաստով անհատական եւ կառավարական նախազգուշութիւնները գրեթէ վերացած են: Ան զգուշացուց «Քորոնա» համաճարակի նոր ալիք մը:

«ՔՈՐՈՆԱ» ԺԱՅՐԻ ԶՆԿԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ...

Շարունակում 2-րդ էջին

իսկ Լիբանանի մէջ վարակուածներու թուաքանակին նուազումը չի նշանակեր, որ «Քորոնա» ժահիրը վերջ գտած է: «Այս ժահիրը կրնայ կերպարանափոխւիլ եւ աւելի արագ տարածուող տարբերակներու վերածուիլ», ըսաւ ան:

Ապիատ հաստատեց, որ այս ժահիրով վարակուելու իբրեւ արդիւնք անհատի մը դիմադրողականութիւնը կըրնայ 6-9 ամիս տեւել:

Ապիատ շեշտեց, որ առողջապահության նախարարության հաստատումով Լիբանանի մէջ հաւաքական դիմադրողականության համեմատությունը 40-50 առ հարիւրի միջեւ կը տարուբերի՝ «Քորոնա» ժահիրով վարակուելու եւ պատուաստուելու իբրեւ արդիւնք:

Ան նշեց նաեւ, որ Լիբանանի մէջ ապրող քաղաքացիներուն պատուաստումի համեմատությունը հասած է 25 առ հարիւրի:

Միւս կողմէ, առողջապահության նախարարի պաշտօնակատար Զա-

մատ Զասան աշխատանքային այցելութեամբ մը մեկնեցաւ Թուրքիա, ուր հանդիպում մը ունեցաւ Թուրքիոյ առողջապահության նախարար Ֆահրեթթին Զոնճայի հետ:

Զանդիպումին ընթացքին Զասան յայտնեց, որ Լիբանանի դիմագրուած կատարեալ զգայուն իրավիճակը կը ստիպէ զայն ուղղուելու ղեպի բարեկամ երկիրներ, որոնցմէ է Թուրքիան, որ կը յատկանշուի իր որակաւոր դեղորայքով եւ բժշկական սարքերով:

Զասան յայտնեց, որ Սայտայի մէջ հիմնուած թրքական հիւանդանոցին բանեցման անձամբ կը հետեւի վարչապետի պաշտօնակատարը՝ աւելցընելով, որ անիկա կը ծառայէ իբրեւ հարաւային Լիբանանի պատուաստումի կեդրոն:

Զամատ Զասան այցելեց Անգարայի կառավարական հիւանդանոցը եւ շըրջեցաւ անոր տարբեր բաժանմունքներուն մէջ:

ԼԱՒՐՈՎ ԵՒ ՊԱՅՐԱՄՈՎ ԲՆԱՐԿԱԾ ԵՆ ԱՐՑԱԽԻ ԶԱՐՑՈՎ ԵՌԱԿՈՂՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐՐՈՒԹԻՒՆԸ

Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկեյ Լաւրով Ազդեցանի արտաքին գործոց նախարար Ճեյիուն Պայրամովի հետ հեռաձայնային հաղորդակցութեան ընթացքին ընկարկած է Արցախի վերաբերեալ եռակողմ յայտարարութիւններու գործադրությունը: «Սփութիք Արմենիա» կը հաղորդէ, որ տեղեկութիւնը կը յայտնէ Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան մամլոյ ծառայությունը:

«Անոնք անդրադարձած են շարք մը նիւթերու՝ Ռուսիոյ, Ազդեցանի եւ Զայաստանի ղեկավարներու 9 նոյեմբեր 2020-ի 11 յունուար 2021-ի համաձայնութիւններու իրագործման ծիրին մէջ, մասնաւորաբար՝ Լեռնային Ղարաբա-



ղի մէջ մարդասիրական խնդիրներու լուծման: Ընդգծուած է Ռուսիոյ, Ազդեցանի եւ Զայաստանի փոխվարչապետներու միացեալ նախագահութեամբ եռակողմ աշխատանքային խումբի կարեւոր ներդրումը շրջանի յետհակամարտային զարգացման գործին մէջ», նշուած է Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան հաղորդագրութեան մէջ:

ԱՐԴՊԵՅՃԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԵՈՅ ՉԻՆՈՒՐՆԵՐԸ ՆԱԽԻՋԵԼԱՆԻ ՄԷՋ ՌԱԶՄԱՓՈՐՁԵՐ ԿԸ ԿԱՏԱՐԵՆ

Ազդեցանն ու Թուրքիան մարտավարական ռազմափորձեր կը կատարեն Նախիջեանի մէջ: «Սփութիք Արմենիա» կը հաղորդէ, որ տեղեկութիւնը կը յայտնէ ռուսական լրատուամիջոցները՝ յղում կատարելով Ազդեցանի պաշտպանության նախարարութեան մամլոյ ծառայության:

«21-23 յունիս երկարող ժամանակաշրջանին մէջ տեղի կ'ունենան յատուկ մարտավարական ռազմափորձեր, որոնց կը մասնակցին Նախիջեանի կայսզօրի զօրքերը եւ Թուրքիոյ զինեալ ուժերու կառավարման մարմինները», նշուած է հաղորդագրութեան մէջ: Նախարարութեան յայտնած են նաեւ, որ ռազմափորձերու ընթացքին զինուորները կը մշակեն կապի միասնական համակարգի օգնութեամբ գործողութիւններու համակարգումը, սպայակոյտերու միջեւ տուեալներու փոխանակման ապահովումը, ինչպէս նաեւ անօդաչու թռչող սարքերու օգ-



նութեամբ ստացուած տուեալներու համարկումը մարտերու կառավարման միասնական համակարգին մէջ: Ռազմափորձերուն մասնակցող անձնակազմին եւ սպառազինութեան թիւին վերաբերեալ տուեալներ չեն յայտնուի:

Միաժամանակ, ռազմափորձերուն սովորութեան համաձայն, պայմանական հակառակորդի հրետանային մարտկոցը հարուած հասցուցած է Ազդեցանական զօրքերու յառաջապահ դիրքերուն: Իսկ մարտկոցի տեղաշարժը ի հարկէ վերահսկուած է «Պայրաքթար-Թի.Պի.2» անօդաչու թռչող սարքերու օգնութեամբ:

ՊԱՐՈՒԻ ՄԷՋ ՍԿԱԾ Է ԱՐՑԱԽԻ ՄԷՋ ԿՈՒՐԱԾ ՌՈՒՍԻՈՅ ԲԱՂԱՔԱՅԻՆ ՂԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Պաքուի դատարանը սկսած է Ռուսիոյ քաղաքացի Ետուարտ Տուպաքովի դատավարությունը: Այս մասին կը հաղորդէ «Սփութիք Ազդեցան»-ը:

Ազդեցանը կը յայտնէ լրատուամիջոցներուն պնդումով՝ Տուպաքով Արցախի մէջ կուրած է հայկական կողմի օգտին:

Անոր մեղադրանք առաջադրուած է «ահաբէկութիւն», «յանցատու խումբի մասնակցութիւն», «Ազդեցանի պետական սահմանի



ապօրինի անցում» յօդաւորում:

Նշենք, որ Պաքուի դատարանը նախապէս դատապարտած է Արցախի մէջ գերեվարուած լիբանանահայ Վիգէն Իւլճեքեանը: Անոր եւս մեղադրանք յառաջադրուած էր «վարձկանութիւն», «ահաբէկութիւն», «Ազդեցանի

պետական սահմանի ապօրինի անցում» յօդաւորում: Դատարանը հայ պատերազմական գերին 20 տարուան բանտարկութեան դատապարտած էր:

Իւլճեքեանէն բացի Պաքուի մէջ այլ կեղծ գործերով կը դատուին շուրջ քսան հայեր:

ՓՈՒԹԻՆ ԱԼԻԵԻ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԱԾ Է ՀԱՐԱՄԱՅԻՆ ԿՈՎԿԱՄԻ ՄԷՋ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐՈՒ ԵՒ ՓՈԽԱՐԱՄԻՋՈՅԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒ ԱՇԽՈՒԺԱՅՈՒՄԸ



Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին Ազդեցանի նախագահ Իլիամ Ալիեւի հետ ընկարկած է Զարաւային Կովկասի մէջ տնտեսական կապերու եւ փոխադրամիջոցային հաղորդակցութիւններու վերականգնման աշխատանքներու աշխուժացումը: «Սփութիք Արմենիա» կը հաղորդէ, որ տեղեկութիւնը կը յայտնէ Քրեմլինի մամլոյ ծառայությունը:

Կը նշուի, որ նախագահներու հեռաձայնային հաղորդակցութիւնը տեղի ունեցած է Ազդեցանական կողմին նախաձեռնութեամբ:

«Ընկարկուած են Ռուսիոյ, Ազդեցանի եւ Զայաստանի ղեկավարներու՝ 9 նոյեմբեր 2020-ին եւ 11 յունուար 2021-ին Լեռնային Ղարաբաղի հարցով համաձայնութիւններու իրագործման գործնական երեւոյթները: Յատուկ ուշադրութիւն դարձուած է Զարաւային Կովկասի մէջ տնտեսական կապերու եւ փոխադրամիջոցային հաղորդակցութիւններու վերականգնման եռակողմ ձեռնարկով աշխատանքի աշխուժացման», նշուած է հաղորդագրութեան մէջ:

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ...

Շարունակում Ա. էջին

Նուազեցնել 100 ամերիկեան տոլարի եւ սահմանափակել զայն միայն 350 հազար ընտանիքներու տրամադրելով:

Հուլայիւս ըսաւ. «Եթէ Աստուծմ չէք վախճար, ժողովուրդէն վախճէք»:

Նշենք, որ վառելանիւթի առումով երեկ 98 օքթան պենզինի թիթեղին սակը հասաւ 46.600 լ. ոսկիի, 95 օքթան պենզինը՝ 45.200 լ. ոսկիի, մագուրը՝ 33.300 լ. ոսկիի իսկ կազը՝ 28.400 լ. ոսկիի:

Այս շրջագիծին մէջ պէտք է նշել, որ արտաքին գործոց նախարարութեան մէջ երէկ աշխատանքը կանգ առաւ, երբ ելեկտրականութիւնը ընդհատուեցաւ՝ ելեկտրածին շարժակին տրամադրուելիք մագուրի չգոյութեան պատճառով:

Վ. ՕՀԱՆԵԱՆ-ԳԵՈՐԳԵԱՆ...

Շարունակում Ա. էջին

յուշանուէր մը: Իր կարգին, դահուկարշաւի ախոյեան Սամեր Թաուք ստացաւ գնահատանքի յուշանուէր մը՝ նկատի ունենալով, որ ան դահուկարշաւի ընթացքին ծանրօրէն վիրաւորուեցաւ եւ չորս ամսուան հիւանդանոցային խնամքէ հետք ապաքինեցաւ:

Նշենք, որ Վ. Օհանեան-Գեորգեան երէկ նախարարութեան կեդրոնին մէջ ընդունեց Լիբանանի Ողիմպիական կոմիտէի փոխնախագահ եւ Նետարձակումի ֆետերասիոնի նախագահ Ժաք Թամերը՝ ընկերակցութեամբ կոմիտէի ընդհանուր քարտուղար Ապտէլ Զատեր Անթարի:

Զանդիպումին ընթացքին ընկարկուեցան Նետարձակումի ֆետերասիոնի վերաբերող հարցեր, ինչպէս նաեւ լիբանանեան մարմնակրթութեան մարզը բարգաւաճեցնելու միջոցներն ու Լիբանանի մէջ բոլոր մարզաձեւերը ընդգրկող բարեկամական միջազգային մրցաշարք մը կազմակերպելու կարելիութիւնները՝ մասնակցութեամբ արաբական, ասիական եւ եւրոպական երկիրներու:

Աղցանց Լսարան

ԱԶԳԱԿ
ՕՐԱՅԵՐ

Երկուշաբթի, 28 Յունիս 2021-ին, Պէյրուքի ժամանակացոյցով ժամը 19:00-ին:

Մասնակցութեան համար գրել minas777@gmail.com եւ նամակի կամ +961 70 80 70 50 համարին (WhatsApp)

ՀԱՄԱԿԱՐԱԿԱՆ ՈՒ ԱՊԱԳԱՅԻ ՄԵՐ ՊԱՐՏԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

Չեկուցող՝ Դոկտ. Յարութիւն Արմենեան
Համաճարակաբան